

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀՆՉԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Անհուն ուրախութեամբ կը հաղորդենք Հայ հասարակութեան, թէ Հին և Վերակազմեալ Հնչակեան երկու հատուածներուն մէջ, Միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ Հնչակեան Միութիւնը կատարուած է:

Միացեալ ու միակ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը պիտի կազմուի անյապաղ, ամբողջ կուսակցութեան քուէովը:

* *

Երկար բանակցութիւններէ, բուն ու վճռական ճիշդերէ վերջ՝ փոխադարձ զիջումներով ու զոհողութիւններով ձեռք բերուած այս առաջին յաջողութիւնը՝ ո՛չ միայն կը սրտապնդէ մեզ այն կազմուիչ հաստատումով, թէ Հնչակեան բոլոր Հին ու նոր ընկերները կ'եղբայրանան, կը համախմբուին դարձեալ, եւ առ յաւէտ, իրենց միակ պաշտելի դրօշակին տակ, այլ նաև իրաւունք կուտայ մեզ հատարու, թէ՛ ինչ որ ալ ըլլան թիրիմացութիւնները, անձուկ մտահոգութիւնները, անգիտակից ասելութիւններն ու դժբաղդ, արմատացած ուժացումները՝ ուշ կամ կանուխ կարելի պիտի ըլլայ իրագործել Հայ յեղափոխական ամբողջական եղբայրութիւնը:

Հնչակեան Կուսակցութիւնը՝ ինք իր մէջ միացած՝ պիտի շարունակէ պահել՝ Հայ յեղափոխական Պնացած անջատ ուժերուն միատարր ձուլումին հեռապնդելու՝ և զայն ամէն կերպով դիւրացնելու իր բովանդակ անվերապահ կամաւորութիւնը: Ու միևնոյն ատեն, աւելի քան երբէք անվատ յամառութեամբ, պիտի ձգտի

ամբողջ Հայ Ժողովուրդին փրկարար համբարշտութիւնը իրականացնել՝ Հայ Յեղափոխական Գործին շուրջը:

* *

Այլ եւս «Հին» եւ «Վերակազմեալ» յարանուանութեամբ ուրոյն Հնչակեան հատուածներ գոյութիւն ունենալէ զազրելով՝ Վերակազմեալ Հնչակեան Կեդր. Վարչութիւնը անհրաժեշտ համարեց հետեւեալ նախնական ուղղել Հ. Ս. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրօին:

Լոնտոն, 1 Ապրիլ 1902

Հ. Ս. Դաշնակցութեան

Արեւմտեան Բիւրօին,

Փրնկ

Յարգելի Հայրենակիցներ,

Ուրախութեամբ կ'իմացնենք Ձեզ, որ Հին եւ Վերակազմեալ Հնչակեան երկու հատուածներուն միջեւ միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած է:

Կարելի եղածին չափ շուտ, ամբողջ Կուսակցութեան քուէով, պիտի ընտրուի միացեալ ու միակ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, որ պաշտօնապէս պիտի հաղորդէ Ձեզ իր կազմութիւնը եւ որուն հետ է որ պիտի կրնաք այլ եւս ուղղակի բանակցութեան մտնել՝ Միութեան մասին, երբ ժամանակը հասած նկատէք:

Սիրելի է մեզ յուսալ որ մինչեւ միացեալ ու միակ Հնչակեան Կեդրոնին կազմութիւնը, ի վիճակի կ'ըլլաք ուղղակի բանակցութեանց ձեռնարկելու, որով կարելի կ'ըլլայ վճռական քայլն առնել զէպի Հայ յեղափոխական ուժերու ամբողջական, բաղձալի միացումը:

Ընդունեցէք մեր յարգանքները

Հնչակ. Կուս. Կեդր. Վարչութեան կողմէն՝

Առնաղաղիբ

Ատենապետ

(Ստորագրութիւն) ԿՆԻՔ (Ստորագրութիւն)

ԱՁՍՏ ԽՕՍՔԵՐ

ՎՆՆՆՆՆՆՆՆ

ՆՈՐ ԵՂԱՆԱԿԸ

—e—

Իմացաց նոր եղանակը:

Դեռ շատ չէ ընդհանրացած բերնէ բերան, զեռ սովորական յանկերգ մը չէ դարձած: Բայց արդէն սկսան զայն մոլտալ արտասահմանի մէկ քանի տարածում անկիւններէ, վարանոտ յամառութեամբ մը, որ սպասական պիտի ուզէր թուիլ, եւ որ հազիւ միամըստօրէն լիբ կը յաջողի ըլլալ:

Միշտ միևնոյն ձայներն են, միշտ միևնոյն դիմակները: Անոնք որ, երէկ, սրտածմիկ շեշտերով, յեղափոխականներու «ազէտարեր անմիաբանութիւնը» կ'ողբերգէին ու «անշատ գործու նկութեան» իրենց ճերշնչած կօկիծովն ու դանութեամբ կը ծամած ունին:

Այսօր, Հայութեան ճակատագրին այդ բոլորանուէր խնամակալները, կըզգան, հոտ կ'առնեն, թէ արտասովոր ու բարբերար ճիգ մը կը թափուի կոր, իրենցմէ հեռու, իրենցմէ իրապառ անկախօրէն: Կըզգան, կը կասկածին թէ, լուսութեան ու տքնութեան մէջ, գեղեցկութիւն մը կ'իրականանայ կոր, եւ թէ նորէն յեղափոխականներն են, միսմինակ, անոր համոզուած գործաւորները:

Ու կը վրդովուին, իրար կ'անցնին — իօրճնկ ու անպատճառ հայրենասէրներ — վախնալով որ բարիք մը կը ծնի ժողովուրդին համար, որուն հոգածու խոյրիաններն ըլլալ կը յաւակնին, կը գունաթափին, սարսափելով որ՝ իրենց օր մը առաջ փափաքած, փառաբանած, պահանջած Միութիւնը կ'իրագործուի, ու իրենց շարաշար կը զրկուին իրենց դասալքութիւնը խեղճօրէն պարտկաղ վերջին խարդախ փաստին:

Ծրէկ՝ յեղափոխական կազմակերպութիւններու դուռները կանց առած՝ Միութեան թմբուկը կը զարնէին մոլեգնաբար: Այսօր, շնական վատութիւնը կ'ունենան բովանդակ Հայութեան հոգեւին սպասած Միութիւնը ցեխօտելու, վարկարեկելու:

* *

Ու նոր եղանակը յղացան հապճեպով, ու անով կը փորձուին հիմա՛ամէն գնով՝ շարունակել միտք պղտորողի, գործ արտոյի, գեղեցկութիւն պղծողի իրենց ճակատագրական անարգ կոչումը:

—Կը խաբէն կոր... պօ՛շ բան է Միութիւնը... վըստահութիւն չունի՛նք... հարուստներ՝ պէտք են գործին դուստր... Գրեմք...

Ու կը փութան — նախախնամական շոշորփներ, որոնց ճզգած ձայնը անտարբերութեան անապատին մէջ կ'իյնայ, կը մեռնի — գերագոյն ու փրկարար դարմանները մատնանշել, խոստանալ, աւետել:

Անոնցմէ կ'ն օրտաշարժօրէն նենգամիտները, վարանոտ ու աղերսարկու շեշտերով, կը սպրդեցնեն, կը թոթովեն:

—Նոր կուսակցութիւն պէտք է, սիրելի՛ք... Խոհեմ կուսակցութիւն... ամբողջ ազգը ներկայացնող կուսակցութիւն...:

Ու այս միութեանը շնորքին կառչած մեր աղետարար Հայրենակիցները ժողովուրդին ականջն ի վար, յուսահատ լաւատեսութեամբ մը, կը փոփան:

—Պատուական ժողովուրդ յեղափոխականներու ձեռքին մէջ դրած մի՛ վատներ... ամբարէ՛ գայն... մեզի՛ բեր... ու մենք քեզի պիտի տանք խոհեմ ու փրկարար կուսակցութիւնը...:

Ու՛ ինքզինքնին խաբելու տարապայման, հիւանդագին պէտքով մը, ձայներնին քիչ մը բարձրացուցած՝ կը գառանցեն:

—Արդէն սաղաթառութեան մէջ է... գրեթէ կողմուած է նոր կուսակցութիւնը, որուն շուրջը պիտի բոլորուին ազգին բոլոր... բարեկեցիկ մտաւորականները:

Ու — թելադրական հանդիպում — այս կցկտուր ձայները կ'իյնեն, կուզան երբեմն, հինցած, մանգոտած շեփօրէ մը, որ՝ տանեակ տարիներ՝ շարունակ նոյն երգը եղանակեց, առաւել կամ նուազ ճեպնտու վառախնդներով որ՝ տանեակ տարիներ՝ շարունակ, յուսահատօրէն, դէպի բոլոր հորիզոնները կանչեց կողակողալին, բայց որ ո՛չ մէկ հեռաւոր արձագանգ գտաւ, ո՛չ մէկ անցորդ կրցաւ զարձնել իր ճամբէն, ո՛չ մէկը կրցաւ հրապուրել իր հրաւերին ազաշատ թախանձանքովը... մինչեւ որ ա՛յ շունչ ու ճար չի մնայ հէզ փոշարին կուրծքին տակ:

Այսօր, տարտամ ու վրդովիչ ազգայններ, որոնք շատ սիրուն պիտի ըլլային՝ հողի միապաղաղ պայծառութեամբ՝ իրենց փխրուն եղունգները խնամել շարունակելով՝ դաժան փորձութիւնը կ'ունենան այդ հին, ճաթած շեփօրին փակցնելու իրենց անմեղ շրթունքները ու՛ իրենց իսկ չբաւող կտոր մը շունչովը՝ շարժել ճարտարութեամբ հասարակայն անտարբերութեան դիակը՝ գոր իրենց գառամած զլխաւորը՝ տանեակ տարիներու ընթացքին՝ չի կրցաւ՝ եւ գոր իրենց կը յուսան — կը յուսան — շնչաւորել, մէկ օրէն միտը:

* *

Յաջորդ յօգուածի մը վերապահելով քրքրել՝ ամբողջ խառցած անհիթթութիւնը այն յաւակնութեան, որով ոմանք սկսեցին են մեղադրել Հայ յեղափոխական:

ներուն՝ անոնց վարիչ շարքերուն մէջ՝ հարուստներու սիրալոծար բացակայութիւնը, աւելորդ ըլլալ թերեւս, քանի մը հակիրճ զիտողութիւններով, վեր հանել առայժմ որքանութիւնը՝ «Նոր կուսակցութիւն» ստեղծել երազողներու ցնորավտութեան:

Թող մենէ շտպասն լալկան ու աղէտոգում երեւիականներ: Մենք չէ՛ որ, այս առթիւ, պիտի փորձուէինք օգտուիլ պարագաներու ձեռնտուութենէն, ու՛ սրտցաւ ու դառնացած շեշտերով՝ պիտի փութայինք ողբալ «ազգակործան» անխղճ սահարութիւնը անոնց, որոնք «բաւ համարելով յեղափոխական տարբեր կուսակցութիւններու անմիաբանութենէն յառաջ եկած վընասները» կ'ուզեն նոր կուսակցութեան մը ձախորդ ընծան բերել Հայ ժողովուրդին, երբ ան եղածներուն միութիւնը իրագործուած տիպիսեւէն համար այնքան սիրտ կը հատցնէ, այնքան առենէ ի վեր կը դալարուի:

Չէ՛, մենք անվրդով կը լսենք բոլոր այդ ունայն ազմուկը, անտարբեր կը զիտենք այդ անկարող խլրտունները, ու կը շարունակենք հանդարտօրէն պահել մեր այն անխախտ համազումը՝ թէ յեղափոխական նոր կուսակցութիւն մը կազմելը ա՛յլ բացարձակապէս անկարելի է:

Յեղափոխական կուսակցութիւնները խօսքով կամ գրածով չէ՛ որ կը գոյանան: Ճակատագրական պարագաներու, հաւաքական ձգտումներու խորունկ ու անդիմադրելի հոսանքէն հարկադրուած՝ անոնք գրեթէ ինքնիրեններն ծնունդ կ'առնեն, կը բղխին ժողովուրդի մը երկկամունքէն՝ մեծ ու վճռական երկունքներու տաժանելի ու հզօր ճիգով: Եւ անգամ մը որ կը նուիրագործուին անոնք ժողովուրդին աբիւնովը, ա՛յլ չիկայ դաշնակցութիւն, ա՛յլ չիկայ մեղսակցութիւն որ կարենայ անոնց արիւնոտ դրօշը նսեմացնել՝ իր ցնորքին ծայրը յազթակաօրէն պարզել փորձած ճերմակ լաթի կտորով:

Նոր յեղափոխական կուսակցութիւն կազմել անկարելի է: Եթէ կարելի ըլլար արդէն շատոնց գոյութիւն կ'ունենային մեր մէջ—ու ասիկա հրճուելով չէ՛ որ կ'ըսենք—քանի մը տառնակներ: Յեղափոխական կուսակցութիւն մը այս կամ այն անհատին կամ խմբակին փափաքովը կամ անջատ, կողիացած ոգորովովը չէ՛ որ մարմին կ'առնէ, այլ ժողովուրդի մը է՛ն ազնիւ, է՛ն անձնուէր, է՛ն կորովի տարբերուն կամաւոր ու գործօն օժանդակութեամբը, ժողովուրդի մը է՛ն հարազատ զաւակներուն միասնի ու ոսկորովն ու արիւնովը կը հիմնուի, ու ժողովուրդի մը իտէալն է որ կ'ապրեցնէ զայն:

Առանց այդ էական, անհրաժեշտ պայմաններուն, անկարելի է յեղափոխական կուսակցութիւն մը երազել իսկ: Եւ այս ճշմարտութեան անվիճելի ապացոյցը զժոնելու համար՝ հետունքը փնտռելու պէտք չի կայ: Կը բաւէ որ յիշենք միայն թէ արդէն գոյութիւն ունեցող մեր յեղափոխական կուսակցութիւնները իրապէս այն օրէն

մկսեալ գոյութիւն ունեցած են, երբ իրենց դրօշին տակ, լրենց պատնէշներուն վրայ, ժողովուրդի զաւակներու արիւնը թափած է:

Եւ յետոյ, ինչ որ անտեսուած կը թուի ըլլալ շատերէ եւ ինչ որ բարեբար պիտի ըլլար յիշեցնել երբեք, սա համեստ բայց յանկարծակիի բերող իրողութիւնն է, թէ բոլոր այն Հայերը, որոնք չեն ապրիր միայն իրենց կաշիին համար, այլ որոնք իրենցմէ բան մը տալ, զօհել կ'ուզեն հանրային իտէալի մը, անոնք՝ որոնք չի պակտիր իրենց ազգային—քաղաքացիական պարտակաւնութիւններուն տարրական գիտակցութիւնը, անոնք—հարազատները, լուսազոյնները—չեն սպասած երբեք ու չիին ալ կրնար սպասել «Նոր կուսակցութեան» անեղանակ ու անակնկալ փողարներու գալուստին: Անոնք արդէն իսկ կը պատկանին մէկ կամ միւս ապրող ու գործող յեղափոխական կազմակերպութեան: Իսկ այն երբտասարդ յեղափոխական խմբակները, որոնք «Միութիւնական»ի տիտղոսին տակ՝ այնքան խանդավառօրէն կը շարժին այս միջոցիս, անոնք՝ տարակոյս չունինք՝ իրենց անկեղծութեան ախրական ապացոյցը պիտի փութան տալ վազը, կտրվօրէն, վճուղաբար, միացած յեղափոխական կուսակցութիւններուն միանալով:

Ո՛վ կը մնայ դուրսը... վարանտներ, ետամոլ անտարբերներ, քարացած «չէզոք»ներ ու վերջապէս իրենք, —Նոր եղանակին անկարող, ծիծաղելի, դատապարտուած հագներգուններ:

ԱՆԼԻՔԻՆ

Արիւնի պիղծ սրկիճներէն դեռ գիւնով՝
Դահիճները — ֆահահներ լշուսիկն —
Մըքիկն, երկար, արհաւիրացի շարքերով,
Գիշերն իրուն գերեզմաններ փորեցիկն:

Գերեզմաններ՝ արքալեցիկն, անձնորաց
Մեր կրտսողներն ու կըտրիճները անգիկն
Ազատութեան ձաւորուն վրայ խորտակուած՝
Մահուան մէջէն սեռեռուելով վրէժիկն:

Հայ Արիւնիկն Ողջակեզի է ահագիկն...
Մոռիսի ամպեր միջոցիկն մէջ ցիր ու ցան...
Եւ մահաշունչ շրտութեան մը՝ Գիշերիկն
Խորը խեղդեց վերջիկն ճայներն Անձկարեան:

Արհաւիրքը հսկայացաւ, խոյացաւ
Վախձանական հովերուն մէջ Անրիկն,
Ու արգաստր որբութեանները անբաւ
Սարսափահար ու խեղձօրէն դողացիկն:

Շուարումի, Ոսրացումի սէն գիշեր .
Կանգ ասեր է Սուրբ Կոթար փրկարար .
Քաղաքի ախոյեաններն անվեհեր
Կարծես շքուեր են ամբոխեն զողահար

Պահուարտաքի անկիւններեն ապահով
Ոհա արխեղծ, խեռ գրչուսներ կ'երկնան,
Կը խոզարկեն, շիլ, կասկածոտ աչքերով .
Վասնզ լիկա՛յ . . . ի՛շ մեռած է ամեն բան .

Ո՞ վերապրո՞ւ ստրուկները դուրս կուզան .
Կը կոխկոտեն գերեզմաններն . . կը բրբնե՛ն .
Ո՞ սողալով դեպի ոտքը Բրանոս՝ ան
Էղեօնական իրենց երգը կը կրկնեն .

— «Մեղա՛յ, մեղա՛յ . . կեցցէ Դահիձն յառիտան»
Ոնե՛՞ծը կրտսին, քմրոտ ոգին ք զ վերնայ,
Մեր վրդին քաղցր է Ստրուկի կուռ շիրան
Մեղա՛յ, մեղա՛յ . . փա՛ռք Դահիձին, կ'վսաննա . . . »

Քանդո՞ւմն է աւ մեր յոյսերուն ամենի,
Եւ Հայոսքեան ձակատագիրն զրժներես՝
Տասապանքի մեր երգրին մէջ ամայի
Շրդրայոնեցա՛ւ Ստրկոսքեան վերջնապես .

Բայց ահա խոշ շուտիւն մը վերստին
Ստրկական անարգ յա՛նկերզն բնդմիջեց .
Ո՞ սեւ ծոցին Հայրենիքի Գիշերին
Կսկծագին, աղեխարշ Չայն մը կսնչեց .

— «Ընդվզումի Ոգին եմ եւ վիրաւոր,
Լանջքիս վերջին արիւնն է միշտ անբուսա,
Չես ուզեցին խաչել ձեռքե, բռնաւոր,
Բայց ես կ'ապրիմ՝ Մահուան մէքեն ալ յամառ .

Ես մարտաշունջ Գեղեցկութիւնն եմ դաժան .
Հերոսներու գոտ սերունդներ վազեցին
Իմ ետեւես . Ո՞ հսկաներ գիւնովցան
Խելայեղիչ իմ տարփանքովս մոլեգին .

Արի՛նն, ասեր ձաւրոսս վրայ կը սփռեմ,
Ստրուկները գիս կ'անկծեն հոգեռին
Ո՞ Մատուոսքեան վատ նայուածքները դժխեւ
Ումենոսքեք քայրերոսս կը հետնին .

Դիակներու, կրակներու ես մէքեն
Կը խիզախեմ դեպի կեանքը սխրալի .
Ոգատոսքի՛նն . . բայց զոհերու փոխարեն .
Տիեզերքի ա՛յս է օքենքն անյեղի .

Բայց այս գիշեր մնացեր եմ միս միւսակ,
Իմ կտորձնարս, իմ առիձներըս բոլոր,
Իմ գո՛ւակներս՝ Քաղաքիս նահատակ՝
Խաւարին մէջ գիս բողեր են սրգատր .

Ըմբոսներու հատա՛ւ սերունդն անվեհեր .
Հայ վրեժին լիջա՛ւ հոշոր փրկատէտ .
Ո՛վ Սուրբ կրտսին դոսք կամաւոր գիւնուրներ,
Ոյրիացա՛յ ձեր տարփանքին առ յաւետ . .

Չէ՛ Գիշերը կը փարատի յամբօրեն
Ոհա կարմիր հորիզոններ վերստին՝
Էղերական վաղորդայններ կը գաժեն
Ո՞ կ'ատենեն բնդհարումներ անագին .

Չէ՛ յրոսած լե՛ւ էս քաջերեն հայորդի,
Ոհա վայրագ աղմուկն անոնց գրոհին
Հետուներեն անեղօրեն կը փրքի .
Նոր կոտիին գունդերն ահա՛ կը հասնին . . »

ՕՍՄԱՆՑԻ ԱԶՍԱԿԱՆՆԵՐՈՒ
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

— 0 —

Համաժողովին գործունէութեան այս տեղեկագիրը
խմբագրուած է Հնչակեան եւ Դրօշակեան պատգամա-
տրներու համաձայնութեամբը :

Օսմանցի Ազատականներու Համաժողովը, զոր
կազմակերպած էին Տամատ—Մահմուտ—Բաշալի երկու
որդիները, Իշխան Սապահէտտին և Իշխան Լուսթուլ-
լահ, իր նիստերն սկսաւ ի Բարիզ փետրվար 4ի օրը .

Կազմակերպիչները հրաւր ուղղած էին Վերակազ-
մեալ Հնչակեան Կուսակցութեան, Հայ յեղ. Դաշնակ-
ցութեան օսկան « Դրօշակ » ի խմբագրութեան և « Հնչակ »
թերթի խմբագրութեան : Այս վերջինը չէր պատասխա-
նած, իսկ « Դրօշակ » ի խմբագրութիւնը եւ Վերակազմեալ
Հնչակեան յեղ. Կուսակցութեան կեդր. Վարչութիւնը
իւրաքանչիւրն երեք պատգամաւոր զրկած էր Համա-
ժողովին մասնակցելու համար :

Ֆրանսական Կաթալարութիւնը նախ արգիլեց Հա-
մաժողովին գումարումը, բայց խումբ մը ազգեցիկ ե-
րեսփոխաններու և քաղաքական անձնաւորութեանց զի-
մումներուն վրայ՝ թալլ տուաւ որ ան տեղի ունենայ,
մասնաւոր անհատի մը տան մէջ և պայմանաւ որ ա-
նոր ասանագրութիւնը հրատարակուել առաջ Ֆրանսա-
կան Կաթալարութեան հաղորդութի :

Հնչակեան և Դրօշակեան պատգամաւորները անհը-
րածեղա համարեցին, Համաժողովին մասնակցելէ ա-
ռաջ, իրարու հետ համաձայնիլ իրենց բոնելիք ուղ-
ղութեան մասին և ունեցան նախնական խորհրդակցու-
թիւններ, ուր որոշեցին Համաժողովին ամբողջ ըն-

Թացքին մէջ համախոհարար գործել: Հնչակեան եւ Գրոշակեան պատգամաւորները այլ որոշման հաւատարիմ մնացին համաժողովին սկիզբէն մինչև վերջը, և այդպէսով ազատական օսմանցիները տեսան ո՛չ թէ երկու կուսակցութեանց ներկայացուցիչներ, այլ վեց Հայեր՝ ներկայացուցիչ Հայկական Դատին:

Համաժողովին մասնակցելէ առաջ, Հնչակեան եւ Գրոշակեան պատգամաւորները յախապատրաստական տեսակցութիւններ ունեցան նաև երկու իշխաններուն եւ իօմայիւ-Քլ. մալ պէյին հետ, և այն ատեն միայն իրենց վերջնական. համաձայնութիւնը տուին Համաժողովին պաշտօնապէս մասնակցելու, երբ տեսան որ Համաժողովին կազմակերպիչները ամբողջութեամբ կ'ընդունէին Հայոց ծրարիւրը, այսինքն 61րդ յօդուածին, ինչպէս և 1895 մայիս 11ի մէտօրանտօմին եւ անդրիական յաւելումին գործադրութիւնը:

Համաժողովին մասնակցելու հրաւիրուած էին նաև մէկ քանի բարեգարնակ հայեր, որոնցմէ Պ. Պ. Չերազ եւ Բասմալեան միայն պատասխանած էին այս հրաւերին. իշխալ երկու պարոնները Համաժողովին մէջ յայտարարելով հանդերձ որ իրենց չէին պատկաներ ո եւ է յեղափոխական կուսակցութեան, յայտնեցին թէ կը յարէին այն յարարութեան գոր Հնչակեան եւ Գրոշակեան պատգամաւորները ներկայացուցին Համաժողովին:

Ազատական օսմանցիներէն ներկայ էին երեսունի չափ անձեր, որոնց մէջ պէտք է յիշել «Մէլիքէթ»ի խմբաւոր Ահմետ-Քիզա պէյը, իր Հայիլ կանկա եւ Ալպիտ Ֆիւս սըխատակիցներով, Հօճա-Գատրին, «Օսմանը» Բերթի խմբաւոր Տօքթօր Ալպէտ, Ֆախրի-Պէյը, Միտհատ-Բաշայի որդի Աի-Հայտար պէյը, Պ. Պ. Սաթաթ, Միւզէրիս-Կիքիս եւ Ժօռ-Տօրիս յոյները, «Ալպանիա» թերթի խմբադրապետ Պ. Տէրիշ Հեմա ալպանացին, «Քիւրտիսթան» թերթի խմբադիր Ապաիւրրահման-պէյ Պէտրխան, քիւրտը, և այլն:

Համաժողովը ունեցաւ վեց նիստ, որոնց առաջին երկուքը զուարուեցան Պ. Լըֆէվր-Բօնթալիօի բնական բանը եւ վերջին չորսը Սապահէտտին եւ Լուիֆօլլահ իշխաններու տունը:

Համաժողովը իրեն Նախագահ ընտրեց Սապահէտտին իշխանը, փոխ-նախագահ, Հայ պատգամաւորներէն Պ. Սիսեանը եւ յոյներէն Պ. Սաթաթը, քարտուղար Տէ. Ալպէտը, եւ յետոյ՝ երբան հրաժարեցաւ Էլիծարանութեան մը առթիւ, Պ. Ժօռ Տօրիսը:

Իմանալով որ Համաժողովին լեզուն թրքերէն ըլլալ որոշուած էր, Հնչակեան եւ Գրոշակեան պատգամաւորները առաջուց պահանջած էին կազմակերպիչներէն որ Ֆրանսերէնը գործածուէր իրրեւ Համաժողովին պաշտօնական լեզուն, բայց նկատելով որ օսմանցի անգամներէն շատերը ֆրանսերէնին անտեղեակ էին, համա-

ձայնեցան որ երկու լեզուները գործածուէին հաւասարապէս, այսինքն թէ իւրաքանչիւր ֆրանսերէն ատենաբանութիւն թրքերէնի թարգմանուէր, եւ փոխադարձաբար:

Համաժողովին սկսելէն առաջ Հնչակեան եւ Գրոշակեան պատգամաւորները զարմանք եւ ցաւ յայտնած էին որ Մակեդոնական երկու Քօմիթէներուն հրաւիրուած չլլար, եւ պահանջած էին որ այդ հրաւիրուող իրանոնց: Կազմակերպիչները առարկութիւններ ըրին Մակեդոնական ուրոյն հարցի գոյութեան պէմ, բայց Հայ պատգամաւորներու պահանջման վրայ՝ համաձայնեցան հրաւիրուող «Գրոշակ»ի խմբադրութեան միջոցով «Եւրոպական Թիւրքիոյ Պուլկարներու»: Իրենց հրաւիրուած անպատասխան մնաց: Համաժողովին սկսելէն անմիջապէս յետոյ Հայ պատգամաւորները հրապարակաւ բողոքեցին Մակեդոնական լսարարն հանդէպ օսմանցի ազատականներու բանած զէջին պէմ և ցաւ յայտնեցին որ Մակեդոնական Քօմիթէներու ներկայացուցիչներ ալ չէին գտնուեր Համաժողովին մէջ. այդ յայտարարութիւնը իրենց պահանջով ատենագրութեան մէջ արձանագրուեցաւ:

Սապահէտտին իշխանը կարգաց հետեւալ որոշողութիւնները, առաջարկելով զանոնց Համաժողովի անգամներուն քուէարկութեանը.

«1. Ամէն համերաշխութիւն կը մերժուի օսմանեան ժողովուրդներուն և այն ռէժիմին միջեւ որուն ներքեւ կ'ապրին քսանեւ հինգ տարիներէ ի վեր: Հարստահարութեան ռէժիմ՝ որ միակ աղբիւրն է կառուութեան մէջ գործուող շարագործութեանց, որոնք բովանդակ մարդկութեան զայրոյթը կը զրգոնն:

«2. Մենք կը ձգտինք կայսրութեան այլ և այլ ժողովուրդներուն եւ ցեղերուն միջեւ հաստատել համաձայնութիւն մը որ պիտի ապահովէ ամենուն առանց խտրութեան, լիակատար վայելուժը իրենց իրաւունցք ներուն որոնց կայսերական «հաթթ»երով ճանչցուած եւ միջազգային գաշնագրերով նուիրագործուած են, իրենց միջոց պիտի հայթայթէ տեղական վարչութեան մասնակցելու իրենց օրինաւոր բաղձանքը ամբողջապէս գոհացնելու, զանոնց պիտի դնէ հաւասար աստիճանի վրայ՝ բոլոր քաղցնիներուն իրաւանց ինչպէս եւ պարտուց տեսակէտով. անոնց պիտի ներշնչէ հաւատարմութեան եւ անձնուիրութեան զգացումը օսմանեան գահուն եւ հարստութեան հանդէպ, որ միայն կարող է պահպանել իրենց միութիւնը:

«3. Չանադիր պիտի ըլլանք ամէն աթիւ օսմանեան բոլոր ժողովուրդներուն իղձերը եւ բոլոր հայրենասերներու ճիգերը համախմբել զէպի սա երբեակ նպատակը. Ա. պահպանում օսմանեան պետութեան ամբողջութեան եւ անլուծելիութեան. Բ. Երկրին ներքին գործոց մէջ՝ վերահաստատում կարգաւորութեան եւ խաղաղութեան, էական պայման յառաջդիմութեան. Գ.

Յարգանք պետութեան հիմնական օրէնքներուն, մասնաւորապէս 1876ին հաստատուած Սահմանադրութեան, որ անոնց ամենէն կարեւոր մասն է եւ որ ամենէն ապահով եւ ամենէն թանկահին երաշխիքը կը ներկայացնէ ընդհանուր բարենորոգումներուն, օսմանեան ժողովուրդներու քաղաքական ազատութեանց եւ իրաւանց՝ ընդգէմ կամայականութեան:

« 4. Մեր հաստատորոշութիւնը կը հռչակենք միջազգային դաշնագրերը յարգելու եւ մասնաւորապէս Պետիկի դաշնագիրը, որուն տրամադրութիւնները, վերաբերմամբ թիւրքիոյ ներքին կարգաւորութեան, պէտք է որ տարածուին պետութեան բոլոր նահանգներուն մէջ:

ԵԶՐԱԿԱՅՈՑՈՒԹԻՒՆ

« Ասոնք ըլլալով այն սկզբունքները որոնց վրայ հաստատուած է համաձայնութիւնը, կը կազմենք մշտական ֆօմիթէ մը որ պիտի ջանայ այս սկզբունքները իրականացնել եւ պիտի ընէ հարկաւոր դիմումները 1856ի Բարիկի դաշնագիրն ու 1878ի Պետիկի դաշնագիրն ստորագրող Պետութեանց յօտ, անոնց բարոյական աջակցութիւնը եւ անոնց կողմէ բարեացակամ գործողութիւն մը ձեռք ձգելու համար, իրեն նպատակ ունենալով գործարդել Տաճկաստանի ներքին կարգաւորութիւնը պայմանաւորող միջազգային յանձնառութիւնները, ինչպէս եւ այդ վերոյիշեալ դաշնագրերէն բղխող բոլոր միջազգային որոշման գիրները, եւ զանոնք պատշաճօրէն պետութեան բոլոր վիլայէթներուն՝ անոնցմէ իւրաքանչիւրին ամենէն օգտաւէտ եղանակովը »:

Հայ պատգամաւորները յայտարարեցին որ չպիտի բռնաբարեն այդ որոշողութիւնները, որոնց ինչ ինչ կէտերուն համաձայն չէին եւ ծանուցին թէ զուգընթաց յայտարարութիւն մը պիտի ներկայացնէին Համաժողովին: Իրեւել տւելին մասնաւորապէս թէ Հայերը կը բողոքային Տաճկաստանը դաշնակցական ուժի մէջ մը առաջնորդուած տեսնել, մինչդեռ ազատական օսմանցիներու որոշողութիւնները կենդանական ձուլման և նոյնացման ուժի մը հաստատման կը ձգտէին. բողոքեցին մասնաւորապէս որոշողութեանց 4րդ յօդուածին՝ զի որ կ'ըսէ թէ « Պետիկի դաշնագրին տրամադրութիւնները, թիւրքիոյ ներքին կարգաւորման վերաբերմամբ պէտք է որ տարածուին կայսրութեան բոլոր նահանգներուն. պարզեցին թէ 61րդ յօդուածը չէր կրնար տարածուիլ կայսրութեան ուրիշ նահանգներուն վրայ քանի որ ան խմբագրուած է միմիայն հայկական նահանգներու տեղական, ցեղային մասնաւոր պէտքերն աչքի առնելու նենալով. ըսին թէ ազատական օսմանցիները իրաւունք եւ նոյն իսկ պարտք ունէին ուրիշ նահանգներու մէջ՝ տեղական պէտքերուն համապատասխանող բարենորոգումներ մտցնել, բայց իրաւունք չունէին պետութեան բոլոր նահանգներուն վրայ տարածուիլ պահանջել այն:

պիտի բարենորոգումներու զորս Եւրոպան պաշտօնապէս միմիայն հայկական նահանգներուն համար անհրաժեշտ է նկատած:

Հայ պատգամաւորները նկատեցին վերջապէս թէ իրենց չէին կրնար ընդունիլ որ 1876ի Սահմանադրութիւնը համարուէր « ամենէն ապահով եւ ամենէն թանկահին երաշխիքը օսմանեան ժողովուրդներու քաղաքական ազատութեանց եւ իրաւանց՝ ընդգէմ կամայականութեան », քանի որ հայերը իրերու բնական ուժով եւ պատմական դէպքերու գտնի փորձերով ստիպուած են իրենց պահանջած և Եւրոպային պաշտօնապէս ճանչցուած մասնաւոր բարենորոգմանց միակ երաշխիքը միջազգային դաշնագրերուն մէջ տեսնել:

« Եզրակացութիւն »ը՝ որուն մէջ զրահան մտքով որոշուած էր Եւրոպական միջամտութեան խնդիրը՝ բուն վիճ մը յարոյց ազատական օսմանցիներուն միջև. այդ որոշողութիւնը որ իսմայիլ-բէժալ պէյի եւ երկու իշխաններու ուղղութիւնը կը ցոյցացնէ և Տաճկաստանի մէջ բարենորոգմանց գործարդումին համար Եւրոպայի գործակցութիւնը անհրաժեշտ կը նկատէ, սաստիկ բողոք մը բարձրացուց Ահմէտ-Քիւպի և իր կուսակիցներուն կողմէն, որոնք հակառակեցան Եւրոպայի գործօն միջամտութեանը հրաւեր կարգաւոր գաղափարին, եւ յայտարարեցին որ օսմանցիները իրենց երկրին բարենորոգում իրենց ձեռքովը պէտք է կատարեն եւ Եւրոպային՝ ի հարկին՝ պէտք է միայն բարոյական աջակցութիւն մը խնդրեն:

Հայ պատգամաւորները ջերմօրէն պաշտպանեցին « Եզրակացութեան » այդ կէտը, նկատելով որ եւրոպական միջամտութեան անհրաժեշտութիւնն ընդունիլը փրկարար նորութիւն մըն էր ազատական օսմանցիներուն գործունէութեան մէջ, թէ այդ միջամտութեանն անոնք չեն կրնար խուսափիլ՝ ի նկատի ունենալով միջազգային պայմանները, որոնց ենթարկուած է թիւրքիան: Այդ որոշողութիւնը ընդունուեցաւ բուն իր մեծամասնութեամբ:

Յետոյ Համաժողովը ունկնդրեց Հայ պատգամաւորներուն յայտարարութիւնը, որ հետեւեալն է:

« Հնչակեան և Դրօշակեան Հայ ֆօմիթէներու պատգամաւորները կը յայտարարեն.

« 1. Թէ Հայ ֆօմիթէները պատրաստ են օսմանցի ազատականներուն հետ գործակցիլ՝ արդի ուժի մը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան:

« 2. Թէ այդ ընդհանուր գործունէութեանն զուրս, Հայ ֆօմիթէները պիտի շարունակեն իրենց մասնաւոր անկախ գործունէութիւնը, յայտնի ըլլալով որ այդ գործունէութիւնը ուղղուած է արդի ուժի մը զէմ և ոչ թէ թիւրքիոյ միութեան և կազմական գոյութեանը զէմ:

« 3. Թէ իրենց մասնաւոր գործունէութիւնը ուրիշ նպատակ չունի արդէն բայց եթէ անմիջական գոր-

ծաղրութիւնը ձեռք ձգել Պէդիկի գաշնագրին 61րդ յօդուածին, 1895 մայիս 11ի Մէմօնաստիւն եւ անոր յաւելումին, ինչպէս եւ այն բարենորոգմանց որ յանուն Հայ Քօմիթէներու դիւանագիտական միջոցով ֆրանսական կառավարութեան յանձնուած յիշատակագրերուն մէջ յիշուած են»:

Ազատական օսմանցիներէն ոչ ոք գիտողութիւն չըբաւ այս յայտարարութեան մասին, միայն անոնցմէ ոմանք հարցուցին թէ ինչո՞ւ Հայերը որ եւ է ակնարկութիւն չեն ըրած Սահմանադրութեան վերահաստատման հարցին, եւ ինչրիցին որ Հայ պատգամաւորները իրենց մտածուիլը պարզեն:

Հայ պատգամաւորները յայտարարեցին թէ, Հայկական Նահանգներէն դուրս Օսմանեան Պետութեան բոլոր մասերուն բարենորոգման գործը շատ յարգելի գործ մը նկատելով հանդերձ, Սահմանադրական կառավարութեան մը հաստատման խնդրով դրականապէս զբաղելու ոչ պարտք եւ ոչ իրաւունք ունին, որովհետեւ իրենց ներկայացուցիչ են կազմակերպութիւններու, որոնք հայկական նահանգներու համար երոպական գաշնագրերու որոշած բարենորոգումները իրագործելէ դատուրիչ նպատակ չեն ունեցած եւ չեն կրնար ունենայ, և թէ իբրև Հայկական Պատին ներկայացուցիչ՝ իրենք չեն կրնար Եւրոպայէն պահանջել վերահաստատուիլ Սահմանադրութեան որ միջազգային գաշնագրիներու վրայ չի հիմնուիր:

Այս յայտարարութենէն յետոյ Հայ պատգամաւորները իրենց պաշտօնը աւարտած համարեցան եւ այլևս Համաժողովին մէջ իրենց ներկայութիւնը անօգուտ նկատեցին:

Վերջին նիստի մը մէջ, որուն ներկայ չգտնուեցան Հայ պատգամաւորները, Ազատական օսմանցիները քննարկած են հետեւեալ որոշողութիւնը:

«Ներկայացուցիչները օսմանեան պետութեան փոքր վերջներուն որոնք մասնակցեցան 1902 փետրվար 4ին ի Բարիզ բացուած Համաժողովին, վերոյիշեալ յայտարարութիւններուն ծանօթանալէ յետոյ, կը բողոքեն թիւրքիոյ արդի ռեժիմին դէմ:

«Յանձնառու կ'ըլլան միահաղոյն աշխատիլ՝

«1. Կերպարանափոխելու ներկայ կառավարական ռեժիմը ազատութեան եւ արդարութեան ռեժիմի մը, ինչ որ պիտի ապահովուէր Սահմանադրութեան վերահաստատմամբը,

«2. Յիշեցնելու երոպական պետութիւններուն թէ իրենց պարտականութիւնը եւ մարդկութեան ընդհանուր շահը կը պահանջեն որ իրենց և Բ. Գրան միջեւ գոյութիւն ունեցող միջազգային պայմանագրերուն եւ որոշմագրերուն պայմանները գործադրել ասն այնպիսի եղանակով մը որ օսման պետութեան բոլոր մասերը անկէջ օգտուին»:

Համաժողովին կազմակերպիչները երոպական լրագիրներուն զրկած էին համառօտ ատենագրութիւն մը որուն մէջ հայ պատգամաւորները նկատեցին ինչ ինչ անճշգոյթութիւններ: Այդ անճշգոյթեանց ամենակարեւորը հետեւեալ պարբերութեան մէջ կը կայանար.

«Հայերը յայտարարեցին թէ շէին կրնար յանձն առնել իրենց ջանքերը միացնելու միւս օսմանցիներու ջանքերուն, իրականացնելու համար այս վերջիններու կողմէ յայտնուած բաղձանքը, արդի ռեժիմը սահմանադրական ռեժիմի մը կերպարանափոխելու մասին, զոր Հայերը կը նկատեն անժամանակ եւ նոյն իսկ իրենց շահերուն հակառակ»:

Ուղղել տալու համար հայ պատգամաւորներու այդ խնդրոյ մասին յայտնած կարծիքներուն այս անճիշտ արտայայտումը, որ կրնար Հայոց համար վնասակար մեկնութիւններու տեղի տալ, Եւրոպայի ինչպէս Տաճկաստանի մէջ, Հայ պատգամաւորները Համաժողովի Նախաշահին ուղղեցին հետեւեալ նամակը.

«Պարօն Նախագահ,

«Ազատական օսմանցիներու Համաժողովին տպագրուած համառօտ ատենագրութեան մէջ, խմբագրութեան թիրիքմացութեան մը հետեւանցով, Հայ Քօմիթէներու պատգամաւորներուն ռահմանագրական ռեժիմի մը հաստատման մասին յայտնած կարծիքները իրենց ճշմարիտ մտածմանը համաձայն չեն արտայայտուած:

«Վիճաբանութեանց այդ մասը պարունակող պարբերութիւնը պէտք էր որ օապէս ուղղուէր.

«Միւս կողմէ՝ Հայերը յայտարարած ըլլալով հանդերձ, թէ պատրաստ են գործակցիլ արդի ռեժիմը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան, նկատել տալին սակայն թէ իբրև պատգամաւորներ Հայ Քօմիթէներուն որոնք կազմուած են Համաժողովին իրենց կողմէ ներկայացուած յայտարարութեան մէջ ճշուած ծրագիրը գործադրելու նպատակով, իրենց իրաւասութիւն չունին պետութեան ընդհանուր բարենորոգմանց եղանակին վրայ որոշում մը յայտնել, բայց թէ բնաւ հակառակ չեն սահմանադրական կեդրոնական ռեժիմի մը հաստատումին որ պիտի յարդէր այն մասնաւոր ու տեղական բարենորոգումները զոր Պէդիկի գաշնագրին ու անկից բղխող միջազգային որոշմագրերը նախատեսուած են Հայերէ բնակուած եւ այդ գաշնագրէն ու որոշմագրերէն մասնաւորապէս նշանակուած նահանգներուն համար»:

Այս նամակը հրատարակուեցաւ «Լ'Էսօրբէն»-ին մէջ, ու Համաժողովին նախագահը խոտաացած է երկրորդ անգամ տպագրել տալ ատենագրութիւնը՝ այդ անճիշտ պարբերութեան տեղ զնելով վերոյիշեալ պարբերութիւնը:

Համաժողովը իր վերջին նիստին մէջ, որուն ներկայ գտնուած են միայն օսմանցի ազատականները, ընտրած է մնայուն Քօմիթէ մը: Հայ Պատգամաւոր-

ները յայտարարած էին կանխապէս թէ չեն կրնար անդամակցիլ այդ Բոմբիթէին քանի որ իրենք կը պատկանին արդէն կազմակերպեալ ու որոշ ծրագիր ունեցող մարմիններու, բայց առաջարկեցին որ այդ Բոմբիթէն մշտական յարաբերութիւն հաստատէ Հայ Բոմբիթէներու հետ և գործակցի անոնց այն բոլոր գործերուն մէջ, ուր կարելի է իրենց գործակցիլ: Այդ Բոմբիթէն կազմուեցաւ ուրեմն ազատական օսմանցիներէն միայն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

— 0 —

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Յռահուար

Որչափ ատեն որ Օրմանեան պատրիարք մեայ Պոլսոյ մէջ, յայտնի չէ թէ Պոլսէն զուրս զրկուած ո՛ր և է նամակ կամ թղթակցութիւն բազրը պիտի ունենայ՝ գեղեցիկ գործ մը մատնանիչ ընելու, ազգին օգտակար ձեռնարկ մը ծանուցանելու: Օրմանեանի մինչեւ այսօր ունեցած հրէշային ու աշտոտ պաշտօնավարութիւնը աւելորդ է ըսել որ այդ մասին ո՛չ մէկ յոյս կը ներշնչէ մեզի: Աստուածաշունչի ատենէն մինչեւ այսօր բազմաթիւ դարեր անցած են եւ ա՛լ ոչ ոք քարէն ջուր կը յուսայ: Այս վերջերս քանի մը թեթև, մակերևութային բարօրումներ մտցուած են թէև Պատրիարքարանի ո՛չ նուազ թեթև, մակերևութային գործերուն մէջ, բայց այդ բարօրումներն ալ, որչափ որ Օրմանեանի անունով ծանուցուած են, շատ հեռու են իր իսկ յղացումները ըլլալէ: Պատրիարքարանի մէջ տակաւին քանի մը ժաջուր տարրեր կը մնան, որոնք այլ և այլ առիթներու մէջ քիչ շատ ջգուտ հակազդեցութիւն մը կը փորձեն Օրմանեանի եւ զինքը շրջապատող էֆէնտիներու վնասակին դէմ: Օրմանեան կը դիմադրէ անոնց առաջարկած ո՛ր եւ է մէկ գործին, ո՛ր եւ է մէկ գաղափարին, կը պոսայ, կը կանչէ, բայց ծրք կը տեսնէ որ իր ընդդիմութիւնը անպտուղ պիտի մնայ, յանկարծական վարպետ դարձուածքով մը իր ընդդիմադիրներուն կը յարի, եւ վերջի վերջոյ խնայրին անանկ երեսոյթ մը կուտայ որ ամէն մարդ կը կարծէ թէ ի՛նք ատաշին անգամ յղացած է մէջտեղ գրուած գործն ու գաղափարը: Ճիշդօրին յաղ մը՝ որ իր պաշտօնավարութեան օրէն ի վեր, մէկէ աւելի անգամներ յաջող ելքով մը ժպտած է իրեն:

Միւս կողմէ սակայն, օր օրի, կառավարութեան իր վրայ ունեցած վստահութիւնը կ'աւելնայ: Պայրամի շնորհաւորութեանց միջոցին, մինչդեռ Յունաց Պատրիարքը ինքզինքը տոգոհ ցոյց տալու ստիպուած ըլլալով

շատ ցուրտ վերաբերումով մը միայն կատարեց իր շնորհաւորութիւնները, Օրմանեան շահագործեց կացութիւնը, եւ առիթն օչտուելով փոստուր կունկ մը ծիւց Սուլթանին քիթին: Կ'երեւայ թէ սուլթանը բաւական ատեն չմտոցաւ այդ խունկին հուար: Յաջորդ օրն իսկ, չէր վարանած Օրմանեանի համար ըսելու թէ իր «սատրգ»ն է, — իր հաւատարիմը: Ու քիչ ետքն ալ, լիազարթի ոսկի եւ արծաթ մետաղներ՝ անպատուութեան, ստորնութեան նշանակներու պէտ կուգային զարդարել Օրմանեանի արդէն իսկ ազտոտ ու ձգուծ կուրծքը:

Արդար ըլլալու համար պէտք է խստովանիլ որ Օրմանեան երախտագէտ է, նոյն իսկ չափազանց երախտագէտ: Սյդ «սատրգ» բառին ու լիազարթի մետաղներուն փոխարէն, Միսուդի պաշտօնական շնորհաւորութեանց առիթի, ելաւ յայտարարեց թէ «Կը սիրէ Տաճկաց կառավարութիւնը»: Եւ որովհետեւ այս ատիճան աներես յայտարարութիւն մը այդչափ մերկ մնալով կրնար պաղ տպաւորութիւն մը ընել, անմիջապէս վերջը աւելցուց. «Կը սիրեմ Տաճկաց կառավարութիւնը, որովհետեւ... ա՛զգս կը սիրեմ»: Եւ այս ոճրագործ, հրէշային ու ամէն կերպով դատապարտելի յայտարարութիւնը հաւանութեան մրմունջներով բնդունուեցաւ ընդունելութեան սրահին մէջ հաւաքուած էֆէնտիներէն:

Խեղճ Հայ ազգ... այսչափ ջարդերէ, այսչափ կեղեքումներէ, այսչափ հարստահարութիւններէ, կործանումներէ, այսչափ լացերէ ու վիշտերէ վերջ, քու մէկ պատրիարքը պիտի ելլէր իրարու հաւատար նկատեր քեզ սիրելն ու քու բոլոր զժաղգութիւններուդ հեղինակը սիրելը...:

Այսպէս, Օրմանեան իր ազգը կը սիրէ, իր ազգը կը պաշտէ, եւ անպին ջարդերը պարբերաբար կը շարունակուին գաւառներու մէջ, ազգը կը կեղեքուի յաջորգաբար, հայ ազգիկները կը լլկուին հոս ու հոն, երթնելութիւնները չեն արտօնուիր, Սասուն կը պաշարուի եւ ամէն յարաբերութենէ կը կտրուի, մանր մունր վահառականները կը սնանկանան, ժողովուրդը կ'իյնայ տնտեսապէս, — ամենէն մեծ, ամենէն ծանր զժաղգութիւնը իրեն համար, — քիրտն ու թիւրքը մութեան օրէն յառաջ կը տանին իրենց հարստահարութիւնները, իրենց յափշտակութիւնները, իրենց կեղեքումները, կառավարութիւնը առջի պէս, իր նպատակներուն իբր ամենէն յետինը կը նկատէ հայ ազգը, իր բոնակալ վարչութեան ամենէն խիստ, ամենէն կործանարար հարուածները անոր վերապահելով: Բոլոր ասուց տեղի կ'ունենան այսպէս, եւ Օրմանեան չի խայնիր, չ'ամչնար հրապարակաւ յայտարարելու թէ կը սիրէ այդ ամէն վայրագութեանց, այդ ամէն խժգուծութեանց հեղինակ հանդիսացող կառավարութիւնը, եւ ասիկա, — գերագոյն սրիկայութիւն, — իր ազգը սիրելուն համար...:

Կառավարութիւնը Օրմանեանի նկատմամբ այդ ատ-

աիճան ամուր ապահովութիւն մը սնուցանելու համար անշուշտ իր մէկէ աւելի պատճառները ունի, պատճառներ՝ որոնք զոնէ մեծ մասամբ ծանօթ են ամենուն: Նախ իր ամօթալի գործունէութիւնը կայ մէջտեղ իր գիւտին պաշտօնավարութիւնը որ ինքնին թիւրք կառավարութեան համար ամենէն հաճելի եւ ամենէն վստահացուցիչ բանը կրնայ նկատուիլ: Յետոյ այն աներես փութկոտութիւնը, որով Օրմանեան աչք կը գոցէ թիւրք կառավարութեան բոլոր ստնձգութիւններուն, բոլոր անհարկի պահանջներուն: Օրմանեան այլ փութկոտութիւնը այն ատիճան ատալ կը տանի, որ շատ հեղ կառավարութեան շտապածն իսկ կ'ընէ, քիչ մը աւելի հաճելի երեւում համար: Այս մասին, խառն ժողովոյ մէջ շարունակ կ'ուր կայ արդէն, շարունակ պոռչուող: Վարչութեան մաքուր տարրը, — ցաւալի զբաղղութեամբ մը շահ սակաւութիւ, — շարունակ կ'ընդդիմանայ իրեն, պահանջելով որ փոխանակ նոր ստնձգութեանց համար ճամբայ հարթելու, աշխատուի արդէն իսկ կատարուածներուն առաջը առնել, ու կ'առեցնել անոնց վնասակար, ապականիչ ու կործանարար ընթացքը: Աւելի մեծ պատճառ մը թիւրք կառավարութեան կողմէ Օրմանեանի նկատմամբ ցոյց տրուած վստահութեան, սա է որ, պալատական լրտես Ռօպէր Եազըճեան անուն սրիկան, որուն զխաւոր պաշտօնն է պատրիարքին գործունէութեանը վրայ հսկողութիւն կատարել, շարունակ լաւ տեղեկագիրներ կը մատուցանէ Երւստը, Օրմանեանի մասին: Թիւրքի ստրուկ այդ անբարոյականը այսօր բաւական ազդեցիկ եւ ամուր դիրք մը ունի Պոլսոյ մէջ, եւ խեղճ Հայ ազգին համար ալ կրնայ երկրորդ Օրմանեան մը նկատուիլ: Իր շուտ բարձրացման խնդիրը ոչ մէկուն համար զաղտնիք մըն է հոս, նկատելով որ նախ աղոտոր տղայ մը եղած է իր պատանեկութեան միջոցին, եւ յետոյ, շափահատութեան միջոցին ալ աղոտոր կիճ մը ունեցած է: Երկու յատկութիւններ, որոնք թիւրքիոյ համար կը բաւեն մարգո մինչեւ ամենաբարձր ատիճաններուն հասցնելու: Այդ աներեսը, իր թէ լրտես գրուած ըլլայ Օրմանեանի վրայ, այս վերջինին հետ համաձայնած, չորս բոլորը կը կողոպտէ առանց խղճահարութեան: Կ'ըսեն նոյն իսկ, — եւ պատրիարքին տունի մարդիկը անգամ, — թէ իր կ'նոջ միջոցաւ խնամի ալ զարձած է Օրմանեանի: Ռօպէր եւ Օրմանեան կը կարծեն թէ կառավարութեան քիթին կը խնայ, բայց աւելի կառավարութիւնն է որ իրենց քիթին կը խնայ, իրենց համաձայնութեամբ կողոպտու միայն կրնան ընել եւ ատոր աչք գոցելով, կառավարութիւնը ապահով եղանակով մը իր աւանակները առաջ կը քշէ: Պալատին համար երբէք կարեւորութիւն չունի թալանը, կողոպուտը, հարստահարութիւնը կը թոյլատրէ այդ ամենուն, պայմանաւ որ իր հաշիւները, իր նպատակները չխանգարուին ատոնց պատճառաւ: Երկրին ո՞ր նախարարը գող չէ,

ո՞ր պաշտօնեան գրամ չիւրացներ, ո՞ր ատիճանաւորը զեղծուած չի գործեր: Խենդութիւն պիտի ըլլար ենթադրել թէ Պալատը այդ գողութիւններէն, այդ իւրացումներէն եւ այդ զեղծուածներէն տեղեկութիւն չունի: Տեղեկութիւն ունի, բայց որովհետեւ անոնց հեղինակներէն կ'օգտուի, ու կը շահագործէ զանոնք, ձայն չի հաներ:

Այս պայմաններուն մէջ ալ զո՞ւր երեւակայեցէք Պատրիարքարանին վիճակը: Երկու խօսքով պատկերացնեմ. Ոստիկանական պաշտօնատան մէկ մասնաճիւղը: Լրտեսներ կը վխտան վերէն վար, եւ պաշտօնեայի հանգամանքով: Դանապանները մասնիչ, պաշտօնեաներէն շատերը մատնիչ, վեղարաւորներէն մեծ մաս մը մատնիչ: Աչքի առջեւ կը բերենք իզմիրեանի օրերուն Պատրիարքարանը, և այս օրուան պատրիարքարանը: Թե՛նց կը սոսկանք, մեր սրտին բաքախուժը կը զարթ տարբրութեան հանգէպ: Սրիկաներու, գողերու, աւազակներու, հարստահարողներու բոյն մըն է այսօրուան Պատրիարքարանը: Թէ՛լը գտնուող մէկ երկու մաքուր մարդերն ալ կը վախնան քիչ մը բարձր խօսելու, եւ իրաւունքով կ'ըսեն թէ, Օրմանեան պատրիարքը իր անձնականին յատուկ լրտեսութեան մարմին մը կազմակերպեր է: Այդ մարմինը կը կազմեն կարգ մը եկեղեցականներ (վարդապետ, քահանայ եւ նոյն իսկ եպիսկոպոս խառն), Պատրիարքարանի պաշտօնեաներ, ազգականներ, եւայլն եւայլն: Ու մինք պատճառներ ու նինք վստահեցնելու թէ իրապէս գոյութիւն ունի այդ լրտեսութեան մարմինը, որուն գործած մանր մունր նախճիրները կը սկսին յայտնուիլ օր օրի:

* * *

Բարից գումարուած «Օրմանցի Ազատականներու» Համաժողովին կարեւորութիւնը և մասնաւորապէս Հայերու հոն ներկայութիւնը հակազդելու համար Պալատը դարձեալ Հայերէն երախտագիտութեան ուղերձ մը կը մտրայ: Ու այն Օրմանեանը, որ Լա Հէի դաւաճան հեռագիրը ստորագրելու պատմական անարգութիւնն ստեղծեցաւ, այս անգամ՝ իր Ռօպէրին հսկողութեանը տակ՝ կը փութայ նախաձեռնութիւնն ունենալ, որպէս զի խառն ժողովը գոհացում տայ Երւստըզի այդ ցանկութեան:

Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ մասնաճիւղերու վարչութիւնը՝ իմանալով այս զգուշի իրողութիւնը՝ իսկոյն պէտք եղած տեղեկութիւններն ու բացատրութիւնները կը հաղորդէ դիւանագիտական շրջանակներուն և ազգու միջոցներ ձեռք կ'առնէ, արգելելու համար խառն ժողովի անգամները՝ ազգին դէմ այդ նոր Օրման-Ռօպէր դաւին մեղաւկցելու:

* * *

Մարտ

Երկրէն հասած տեղեկագիրները հետզհետէ աւելի տրուր կացութիւն մը մատնանիշ կ'ընեն:

ՄԱՐՁՈՒԱՆ.— Այս կողմերը տնտեսական անհանդուրժելի կացութեան մը մէջ կը գտնուի ժողովուրդը: Թշուառութիւն, յուսահատութիւն կը տիրէ ամէն կողմ. սնանկութիւնը օսվորական զարձած է:

Կառավարութիւնը իր հարստահարութիւններով ու անխղճութիւններով ծայրայեղութեան կը հասցնէ մասնաւորապէս հայերու տառապանքը: Տուրքերու մասին անլուր խստութիւններ կը գործադրէ միևնոյն վայրագ ընթացքով: Իրենց օրուան հացը հազիւ ճարող մարդոց տուններ կը մանեն ամէն օր ե ինչ որ գտնեն կը ծախեն՝ ոչինչ գնով մը:

Ասկէ ամիս մը առաջ Հանի գիւղի կառավարութիւնը երեք հարիւրի չափ խեղճ գործաւոր հայեր իրենց տուններէն ու աշխատած տեղերէն հաւաքելով բանտը կը լեցնէ սուրբի համար:

Բանտարկեալները մեծ մասամբ խեղճ ու անկարող մարդիկ են, ուտելու հաց չունին, բայց կառավարութիւնը խօսք չի հասկնար:

Քանի մը օր առաջ կառավարական վայրենի պաշտօնեաներ զժբաղղ բանտարկեալներու տակը ջուր կը կապեն, որպէս զի չի կրնան նստիլ ու ոտքի վրայ մնան:

Երեք շաբաթ առաջ ալ տեղւոյս կառավարութիւնը զարձեալ տուրքի համար՝ 300է աւելի հայեր բանտարկեց խոնաւ, նեղ ու մութ տեղեր լեցնելով գանոնք:

Վերջերս հարկահաւաքներուն ձեռքը տրցակներով ազգարարագիրներ տրուած են, յայտարարող, թէ ամէն մարդ պէտք է ձեռք օրուան մէջ ամբողջ իր պարտքը վճարէ, եթէ ոչ՝ կառավարութիւնը ինչ որ գտնէ, գոյք, հող, ամէն բան պիտի ծախէ: Իսկ անոնք որ բան մը չունին ծախուելու, պիտի դատապարտուին ԾԱ օրուան բանտարկութեան:

Սուլթան Համիտի արժանաւոր գործակատարները իրենց հաճոյք մը սեպած են աղքատ հայերը ԾԱ օր սճրագործներուն յատուկ մութ ու խոնաւ բանտին մէջ փակել, մաշեցնել, լիցնել բոլորովին:

Ասկէ երկու շաբաթ առաջ տեղւոյս կառավարութիւնը ամենախիստ միջոցներով սկսաւ գանձուիներն ընել հայերէն, և 4,600 ոսկի գրամ գանձեց: Այս գրամին գրեթէ կէսը ի հաշիւ յառաջիկայ տարւոյն է. իսկ միւս կէսն ալ փոխառութիւն է՝ որ մէկ-երկու տարիէ օսվորութիւն ըրած է կատարել:

Այս շաբթու, վերոյիշեալ ազգարարութեան համեմատ, տուրքի պարտք ունեցող շատ մը հայերու այգիներն ու հողերը աճուրդի դրուեցան, քանի մը օրէ ի վեր աժան գիններով կը ծախուին ու պիտի ծախուին:

Քեռ քանի մը օր առաջ, նորէն հայ մը վաճառուն դահեկանի պարտքը չի կրնալ վճարելուն համար ԾԱ օրուան բանտարկութեան դատապարտուեցաւ: Խեղճը օրական 26 փարայի հաշուով իր հոգիէն ու կեանքէն պիտի տուժէ սոսկալի տանջանքներու տակ, եւ այդպէսով պիտի քաւէ իր նիւթական անկարողութեան պատիժը:

* * *

Ասկէ առաջ կառավարութիւնը Ամերիկա գաղթելու ուղի հայերուն արտօնութիւն չէր տար, բայց չեմ գիտեր ինչ դարձուածքով՝ անցեալ շաբթու սկսաւ արտօնել և առաջին պատեհութեամբ 15-20 երիտասարդներ բառօր ուղեցին՝ օսմանեան հպատակութեան թուղթով մեկնելու համար:

Քնաանիքով ալ գաղթելու պատրաստուողներ կան եւ եթէ այսպէս երթայ, գաղթելու միտումը պիտի ընդհանրանայ: Մէկ երկու թիւրքեր ալ գտնուած են գաղթելու փափաք ունեցող:

Սերաստիոյ եւ Կարինի կողմերը Հայոց վիճակը, կ'իմանանք, թէ չափազանց թշուառ է:

* * *

Ասկէ երկու երեք տարի առաջ Ռուսիայէն այս կողմերը գաղթող իսլամները՝ զորս կառավարութիւնը հոս հոն ցրուած է՝ շատ խեղճ վիճակ մը ունին, շատ կ'ափոսան ու կը զղջան եկած ըլլալուն համար: Բայց կրնան միտնալուիլ. քաղաքագետութեան անտուկէն մինչև հիմա նպատակը իրանան, հաց ունին գոնէ, հայերուն քոսկը անոնց համար ալ կը պարպուի:

* * *

ՍԱՄՍՈՆ.— Մեր առած ստոյգ տեղեկութեանց նախելով, թիւրքերը դարձեալ կ'ուզեն վերսկսիլ իրենց գազանութիւնները:

Մարզուանի մէջ վերջերս կրկին հայերը կոտորելու մեծ պատրաստութիւններ կան եղեր:

Գուրպան Պայրամին երկրորդ օրը ուզեր են գործադրութեան գնել իրենց աւարառութեան ու կոտորածի դժոխային ծրագիրը, բայց կառավարութեան գլխաւոր պաշտօնեաներուն մէջ տիրող անհամաձայնութեան պատճառաւ, աղէտքին առաջն տոնուեր է, սակայն և այնպէս վտանգն ամբողջովին անհետացած չի նկատուիլ: Թիւրք խուժանը այն ատիճան անզուսպ կատաղութեամբ լցուած է որ միշտ յարմար առիթ մը, պատուակ մը կը փնտռէ իր վայրագութիւնները շարունակելու: Հայերը շատ ահաբեկած են:

Մօտակայ ուրիշ գաւառներէ առնուած լուրերէն կը

տեղեկանանք որ նոր ջարդի մը հաւանականութիւնը կը շեշտուի նաև օւրիշ շատ մը հայաբնակ տեղերու համար ալ:

Եթէ եւրոպական պետութեանց կողմէն ազգու միջոցներ ձեռք չանուօին, տարակոյտ չիկայ որ 95ի և 96ի աղէտալի օրերու տխուր անցքերը պիտի կրկնուին:

Կիրասօնի մէջ նոր ձերբակալութիւններ եղած են, Փ. Օզանեան անուն երիտասարդ մը բանտարկուած է. կառավարութիւնը կ'ուզէ իբր քաղաքական յանցաւոր դատապարտել զայն:

ԱՍՊԱՏԱԿՆԵՐԸ

~*~*~*~*~*~*~

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Ի.

ԵՐԿՈՒ ՍՈՒՐՋԱՆԴԱԿՆԵՐ

Լեռնագաւառի փոքրիկ հովտին մէջ, կոխը կը շարունակուէր, երբ երկու երիտասարդ ճամբորդներ՝ Ուլու Փունարէն վար՝ Ապտալ գետակին մէկ անցքին վրայ՝ իրարու հանդիպեցան:

Մէկը, լազի զգեստներ հագած, առոյգ ու վայելչակազմ կտրիճ մըն էր: Մետաքսապատ ծայրերով որմալը պաշլըզը անոր օտ մազերը կը ծածկէր: Արծաթապատ զաշոյն մը մէջքին, երկու վեցհարուածեաններ ալ ու ձախ ազդերուն վրայ և ձեռքին մէջ ուսական թեթև պերան հրացան մը՝ հապշտապ քայլերով կ'երթար, Չարշամպա առաջնորդը ճամբէն:

Միւսը չէրքէզ մըն էր: Միջին հասակ, լայն կուրծք ու երկաթի կազմուածք, վստահ ու անվախ աչքեր, որ խորամանկութիւն ու ճարպիկութիւն կը ցոլացնէին: Չէրքէզի ուղիորական զաշոյնէն զատ, զարատաղ վեցհարուածեան մը միայն կախած էր իր կշտին, ու արտորնօք իր ճամբան կը շարունակէր:

Անցքին գլխուն՝ անոնք թրջական բարև մը փոխանակեցին, ու երկուքն ալ խրոխա ու ինքնավստահ, իբրբարու աչքերուն մէջ նայեցան, անսովոր հետաքրքրութեամբ եւ կասկածոտ համարձակութեամբ:

Հետեւն, լեռնազաշտին բարձրավանդակէն, կը

լսուէր անպարզում հրացանաձգութեան աղմուկը: Ուսմէն անգամ որ խուլ արձագանքները, վարը, մեր ճամբորդներուն կը հասնէին, երկուքն ալ՝ տարօրինակ ու անձկագին ցնցուածով մը կանգ առած՝ կարծեօ ետ դառնալ կը փորձուէին: Լազ երիտասարդը մասնաւորապէս անհանդարտ ու վրդովուած ըլլալ կը թուէր:

— Դուն ալ Չարշամպա կ'երթաս, հարցուց ան անհամբեր՝ չէրքէզ երիտասարդին:

— Ո՛չ, պատասխանեց չէրքէզը, այսօր թէքիէ գեղ մնալու միտք ունիմ, վաղը Սամսօն պիտի երթամ:

— Հոն աւետի՛օ կը տանի՛օ, հարցուց լազը, խորհրդաւոր շեշտով մը:

— Ի՛նչ աւետի՛օ:

— Կը լսե՛օ այո հրացանի ձայնը, ըօաւ լազը, լեռները ցոյց տալով. Լոզմանն ու Կիւչիւկ Հասանն են, Մինաս Օղլուն պաշարած են, կ'երեի որ կոխը երկար պիտի տեւէ, մեկնելէօ ի վեր ժամ մըն է, դեռ կը պատերազմին:

— Ո՛վ են այդ Մինաս Օղլուները, հարցուց չէրքէզը, հետաքրքիր նայուածքով մը Լազին դէմքը սեւեռած:

— Քեզի պատասխանելէ առաջ՝ կ'ուզեմ գիտնալ թէ դուն ո՞ր տեղացի եօ, յարեց Լազը, իր չէրքէզ խօսակիցը վերէն վար չափելով:

— Եօ Ղազ Օվայի Ղալայճի գիւղէն եմ. Հոն թէքուօր դիւղին մէջ թիւրք ազգական մը ունինք, քանի մը հաշիւներ կային կարգադրելու, լմնցուցի եւ հիմա կը վերադառնամ: Կ'ուզէի գիտնալ միայն թէ մինչև թէքիէ քանի՞ ժամ կը տեւէ:

— Մօտաւորապէս երկու ժամ, ըօաւ լազը: Դուն իյոա Պէյը կը ճանչնամ, մէջ բերաւ ան մէկէն:

— Այո՛, պատասխանեց չէրքէզը, Չագալը դիւղը կը նստի, եղբօրո աներն է, այո կողմերը զալուօ միշտ իրեն հիւր կ'ըլլամ:

— Ի՛մ ալ մտերիմ բարեկամօ է, բացուեցաւ լազը, եօ ժամանակին Լոզմանի աւազակային խումբին մէջ էի: Մեր բոլոր արշաւանքներուն ատեն իյոա Պէյին ատունը մեզ համար միշտ բաց էր. մեր գողօսները հոն կը պահէինք: Գեղեցիկ աղջիկ մըն ալ ունի:

— Չիլպէն, գոչեց չէրքէզը:

— Ճի՛շտ ան: Ես ժամանակ մը անոր դարձուէր էի, բայց ըօին թէ Չիլպէն չէրքէզ երիտասարդ մը կը սիրէր, համբաւուոր աւազակ մը:

— Ճուշուտ պէկը, ըօաւ չէրքէզը:

— Դուն ամէնքն ալ կը ճանչնաս կոր:

— Ինչո՞ւ չի ճանչնամ, ազգականներօ են:

— Հա, Ղարա Տաղը գիտե՛օ:

— Ան որ Ղազային ու Գաւազին մէջտեղ կ'իյնայ:

— Հա՛, ճիշտ ան: Օր մը հոն, մէկ անգամէն, քօանէն աւելի հայ վաճառականներու խումբ մը կօշօ պտեցինք: Ի՛նչ հարօտութիւն, օտակ, զարգ, զէնք ու

ապրանք: Այն օրը Իյօա Պէլը ուրախութենէն խենդե- նալու վրայ էր: Լաւ ապարանջան մը ձեռք ձգած էի եօ: Չիլպէյին տուի իբրև նուէր: Մերժեց:

Տեսնելով որ լազը հեռունբը կ'երթար, չէրքէզ ա- նոր խօսակցութիւնը կտրեց:

—Ո՞վ են ուրեմն աօ Մինաս Օղլունբը:

—Ով պիտի ըլլան, խումբ մը կեանքուր աւագակներ, որոնց պիտաւորը՝ Մինաս՝ ժամանակին, իբ ձիււոր ու- տիկան, մեր ետեւէն ինկած էր միշտ: Հիմա ինքը կա- ռավարութեան ապտամբ էջըրյա մըն է եւ Լօղմանն ու Կիւչիւկ Հիթանը, իրենց խումբով, զայն բռնել կ'աշ- խատին: Պաշտօններ պիտի ստանան:

—Քաջ մարդ է Մինաս Օղլուն, հարցուց չէրքէզը:

—Լուին գնդակ կը նետէ:

—Ուրեմն ի՞նչպէս կարելի է անոր հետը շափուիլ, մինչեւ հիմա Լօղմանն ալ, Կիւչիւկ Հասանն ալ զըն- դակահար եղած ըլլալու են:

—Թէօվպէ՛ տէ, Թէօվպէ՛ տէ, բացազանչեց լազը, կասկածոտ ակնարկ մը ձգելով չէրքէզին վրայ: Տու- ներնիս պիտի քանգ՞օ: Այդ կտիւն ելքէն կախու- ունի մեր ամենու ապագան: Լօղմանն ու Կիւչիւկ Հա- սանը պին պաշի պիտի ըլլան, խումբին միւս անդամները շափուութեան աստիճանին պիտի բարձրանան, իսկ ես միւլազըմ պիտի ըլլամ, միւլազը՛մ, կը հասկնա՛օ, եթէ ժամանակին կարենամ Մինաս Օղլունբու ոպաննուելուն աւետիտը Չարշամպա հասցնել:

Լազը, միւլազըմութեան իր վարդագոյն երազէն զպխած, պէտտանը վեր վերցուց, եւ սկսաւ ճամբուն մէջտեղը լեզ- կինկա խաղալ ու վայրենի պոռչտուցներով օղը թնդա- ցնել: Թեառոյ քանի մը փամփուշտ արձակեց եւ ու- րախութենէն քրտնոզ դէմքը սկսաւ թեզնիքովը օրբել:

—Հիմա ո՞ւր կ'երթաս, հարցուց չէրքէզը:

—Չլուցի՛ր, Չարշամպա կ'երթամ, կառավարութեան լուր տալու, որպէս զի պատրաստուին ատօք փառօք Լօղմանը դիմաւորել. ասանկ կարգադրութիւն ըրած ենք առաջուց:

Չէրքէզը ուշադրութեամբ նայեցաւ լազին: Արկա- ծախնդիր ու անվախ ցեղի մը զաւակներէն էր ան՝ ու- րօնց կտիւն ու արիւնահեղութիւնը իրենց առօրեայ կեան- քին մէկ մասնաւոր նպատակը կը համարին, աւագա- կութիւնը իրենց սովորական արհեստն ըրած են եւ որոնց համար առանց վէրքի գերեզման մանելը մա- հացու անպատուութիւն մըն է: Յեղբորն է՛ն համար- ձակն ու անվեհերը, գեղեցիկն ու վայելչակազմը մի- անգամայն:

Ու Չէրքէզը կը յիշէր Թաթօսի խօսքերը, այն նշան- նակալից ու շինիչ դասերը, զոր խումբին աւանդելու օովորութիւնն ունէր ան, երբ ասպատակները՝ իրենց արշաւանքներէն դառնալով՝ անտառին խորերը կ'ապա- տանէին պահ մը հանգչելու համար:

—Կոուիլը, գողնալը, թալլելը, սպաննելը արգիւի- ր են Հայերու, կ'ըսէր Թաթօս, այն տեսակ միջավայրի մը մէջ ուր անոնք գոյութեան պահպանումին է՛ն ա- պահով ու արդար զէնքերը կը կազմեն: Մեր սարուկ տափակութեան մէջ, մենք անզգայ ապրանք մըն ենք զարձեր, վրայ հասնողը մենէ բան մը կը փրցնէ, ու դիմադրութեան, ինքնապաշտպանութեան անասնական բնազդն իսկ մեռեր, ոչնչացեր է մեր ներսիդին:

Թաթօսի այդ իրաւացի խօսքերուն վերյուշումը Չէրքէզին կուրծքը ուռեցուց: Վայրկեան մը մոտցաւ ան ինքզինքն ու իր լազ խօսակիցը յափշտակուած ետ դարձաւ ու վերը՝ ետին՝ լեռնագաւառը տեսեց՝ ուրկէ կտրիճներու հրացանները կը շարունակէին որստալ:

—Ի՞նչու, կ'ըսէր ան ինքնիրեն, մեր հերոսներուն քաջագործութեան աւետիտը այս միջոցիս ամէն կողմ շարձագանջուէր, ի՞նչու անոնց յաղթանակին հոշակը չվազէր հիմա բոլոր հայաբնակ քաղաքներուն ու գիւ- դերուն մէջ ու հայրենի երկրէն կտրիճներու սերունդներ շեղէին փրկութեան կտիւն հասնելու, Մինասներուն ետեւէն:

Մինասեան խումբը՝ իր ասպատակութեան ամբողջ ընթացքին՝ միայն Մարզուանի կարգ մը հայերէ քիչ շատ քաջալերուեր էր: Բայց այդ ազնիւ ու պարտա- ճանաչ հայերուն թիւն ալ սահմանափակ էր: Անոնք, իրենց զուտ ունենալով սքանչելի Թումսեան Յարու- թիւնը, վտանգէ վտանգ կը խիզախէին ազատութեան ոգին արթնցնելու համար ժողովուրդին մէջ: Աօղին, իրենց զրկից շատ մը հայաբնակ քաղաքներ կային, եւ եթէ այդ լեռներուն բարձունքէն ասպատակները պո- ալային, անոնց ձայնը մինչեւ իրենց ազգակիցներու ա- կանջին կը հասնէր, բայց անոնք ամէնքն ալ սորկու- թեամբ անասնացած՝ իրենց զուտը միշտ աւելի կը ծռէին ու չորեքթաթ կ'երկրպագէին շարունակ Թիւրքին ու Մամոնային: Հայ կտրիճները անոնց համար օրի- կաներ էին, հայ հերոսները՝ հասարակ աւագակներ. կտիւն ու զէնքը անոնց սարօսփ կ'ազգէին:

Չէրքէզ պահ մը իր խորհրդածութիւններուն մէջ խորասուզուած՝ մեքենական քայլերով կը հետեւէր լազ երիտասարդին: Հասած էին գետին մէկ ոլորակին, երբ Չէրքէզ օթափեցաւ յանկարծ ու իր առջեւէն տեսաւ ճը- կուն Լազը որ վայրկեանի մը մէջ գետին հանդիպա- կաց կողմը կանգնած՝ համարձակ ու դուարթեքես, իր քայլերը կը դիտէր: Նախանձի նման բան մը արժնցաւ իր ներսիդին: Ինքն ալ չէր գիտեր թէ ի՞նչու մինչեւ հոտ՝ առանց գատուելու՝ ընկերացեր էր այդ անձնօթ տղուն, ի՞նչու վերը, անտառին առանձնութեանը մէջ, չեւ ըս- պաննած զայն: Անոր ընկերները՝ վերը՝ իր ընկերներուն հետ կը կօտէին: Ի՞նչու ինքն ալ հոս չը չափուէր: Բայց այդ վայրի երիտասարդին վրայ հմայիչ բան մը կար, որ զինքը կը կեցնէր, գրեթէ կը խանդազատեցնէր: Ա-

րիութեան, համարձակութեան, պարզութեան ու անկեղծութեան մարմնացումն էր ան ամբողջապէս: Տարիքն առեր, առնացեր էր, բայց տղու մը խօսուածքն սւ շարժուածքն ունէր: Չէրքէզը ատելութենէ աւելի՝ համակրութիւն սկօսեր էր զգալ անոր նկատմամբ:

Մօտաւորապէս ժամ մըն էր որ միասին կը քայլէին, և հրացանաձգութիւնը չէր դադարած տակաւին: Չէրքէզը հրացանի սրտաներուն ուշադրութիւն ըրած էր աւելի, քան իր լազ ուղեկցին խօսքերուն, եւ իր բոլոր հարցերը արուեստական ու բանադրօտիկ շեշտ մը ունէին:

—Անոնց հրացանները զեռ կորոտան, ըսաւ ան մեկուսի, կարծես զնդակի ձայներուն մէջ ալ զանազանութիւն մը որոշելու յաւակնութիւնն ունենար:

—Պահ մը հրազենները բոլորովին լոցին:

—Վերջացա՛ւ, ըսաւ լազը, կեալուրները մինչեւ հիմա սատկած ըլլալու են, եւ շուտով վազելու եմ աւետիս տանելու:

Վերջին եւ միակ հրացանի ձայն մըն ալ լսուեցաւ:

—Կապեախնն է, մտածեց Չէրքէզը, ան տղան պարպը չի նետեր, յաղթութիւնը մերիններունն ըլլալու է:

—Ինչու դուք կը կոտիք Մինաս Օղլուին հետ, ըսաւ ապա Չէրքէզը, խօսքը լազին ուղղելով, միթէ կառավարութիւնը ոստիկան չունի՞:

—Հարիւրներով ունի, բայց՝ խօսքը մէջերնիս՝ ամենքն ալ իրենց կաշիէն վախցող խեղճուկրակ երկոտանիներ են, մինչեւ իրիկուն խումար կը խաղան, իրարու կը հայհոյեն, անզէն մարդոց վրայ միայն զէնք բարձրացնելու օովորութիւնն ունին ու վախկօտներու սպանալու իրենց քաջութեամբ կը պարծնան:

—Մեղք չէ այդպէս լաւ զէնք գործածող ու սրտոտ կտրիճները հալածել, մենք չէրքէզներօ ընդհանրապէս կը յարգենք զանոնք:

—Կեալուր են, կը հասկնա՞ս, թէ կտրիճ կեալուր, և լազերը կը նախընտրեն կտրիճներու հետ կոտիլ քան վախկոտներու: ասոնք առանց հրացանի ալ կը վախնան, որոն վրայ պիտի պարպենք ուրեմն մեր հրացանները, զարդի ու ցոյցի համար չէ՞ որ զանոնք մեր վրայ կը կրենք:

Ու լազն սկսաւ իր թեթեւ պերտանը շոյել:

—Անունդ ի՞նչ է, հարցուց Չէրքէզը:

—Սէյտի: Քու անունդ ի՞նչ է:

—Մանսուր: Դաշոյնդ չե՞ս փոխեր, Սէյտի, մենք կրնանք լաւ բարեկամներ ըլլալ ապագային: Դուն կտրիճ տղայ կ'երևիս, ու մենք չէրքէզներօ կտրիճները կը սիրենք: անոր համար քենէ յիշատակ մը ունենալ կ'ուզեմ:

—Փոխենք, Մանսուր, ըսաւ լազը, որ ինքն ալ սկսեր էր համակրիլ իր չէրքէզ խօսակցին, փոխենք, ու իր արծաթապատ դաշոյնը Չէրքէզին երկնցուց:

Յաւատենական եղբայրութեան անքակտելի ուխտն էր, զոր կը կնքէին անոնք:

—Ծո այստեղ կը զատուիմ քենէ, ըսաւ Չէրքէզը, մենք ապագային իրարու հետ շատ պիտի տեսնուինք: Մանսուրը չի մոռնաւ:

—Քանի այս դաշոյնը քովս է, անհնար է, որ անոր աւերը մոռնամ, դուն ալ Սէյտին մտքէդ չհանես... հա՛, Չադայըն անցած ատենդ Չիյակին բարեւերս տար, ան զիօ կը ճանչնայ, քիչ մըն ալ կը սիրէ կարծեմ, թէեւ ապարանջանս մերժեց: Ըսէ՛ իրեն թէ մենք զաշոյններ փոխանակած ենք:

—Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, մեա բարձ՛վ, գտնեց Չէրքէզը, ու դաշոյնը մէջքին կապելով, դէպի անտառը տունսղ ճամբան ձեռք առաւ:

Մացառուտին ետին կ'մկտած՝ երկար ատեն նայեցաւ լազին ետեւն, մինչեւ որ անհետացաւ ան:

—Օր մը այս երիտասարդը մեր անբաժան ընկերը պիտի ըլլայ, խորհեցաւ Չէրքէզը, ճամբան շարունակելով:

Չէրքէզ ուրիշ մարդ չէր, եթէ ոչ մեր ծանօթ հայ հերոսը, որ կոխէն քիչ առաջ, հրահանդ ոտացած էր Սամսոնի վրայով Մարզուան երթալու, հոն խումբին տեղ պատրաստելու համար: Լուսեակն՝ վտանգի նշանը տալէն անմիջապէս վերջ՝ Ուլու Փունար վազեր էր ինքն ալ, խումբին բոլոր անգամներուն պէս, անօտաման ղօտահութիւն ունէր յաղթութեան վրայ:

Ոսպատակները կ'ուղէին, կոխէն վերջ, Մարզուանի կողմերն երթալ, ոչ այնքան պահուրտելու, որքան իրենց հոն երևուածը տեղին երիտասարդութիւնը քաջալերելու, ցնցելու, եւ անոր թերահաւատութիւնը միանգամ ընդ միշտ ցրուելու:

Չէրքէզէն զատուելէն վերջ, Սէյտին քիչ մը տեղ մինակ գնաց, մինչև որ գիւղացիներու ձիաւոր խումբ մը անոր միացաւ: Սէյտին այդ գիւղացիներուն պատմեց վերը տեղի ունեցած Լօղմանի եւ Մինաս Օղլուի կոտիները: Քիւղացիները, որոնց ամէնքն ալ կրօնամով թիւրքեր էին և մահու շափ կ'ատէին Մինաս Օղլուն, ուշադրութեամբ մտիկ ըրին լազին, որ կ'առաջարկէր իրեն փոխ տալ ձիերէն մէկը, յաղթութեան աւետիսը վաղօրօք կառավարութեան հասցնելու համար:

—Հինգ մէծիտէն աւելի պարդու կայ ձին փոխ տուողին, ըսաւ ան, բացի պաշտօնէն, զոր գայմագամ էֆէնտին կրնայ շնորհել:

Դրամ ու պաշտօն՝ միացած կրօնամոլութեան՝ թիւրք ճամբորդներուն խելքը թոցուցին ու անոնցմէ իւրաքանչիւրը իր ձին առաջարկեց:

Սէյտին շատերուն մէջէն հատ մը զատելով, վրան նետուեցաւ ու ասպանդակը անառունին կողը խթելով սկսաւ Չարշամպա վազել քառասմբակ:

Վայրկեանէ մը, մրրիկի նման, անհեցացաւ Սէյտին թիւրք ճամբորդներու աչքէն: Դեռ արևը մարը չմտած, սուրհանդակը քաղաք հտտաւ, ահագին գոռուսմոլուսմեք:

րով կամուրջն անցաւ և կառավարական շէնքին ճամբան ձեռք առաւ, ամէն կողմ զարմանք ու ապշուածին ձգելով: Քաղաքացիներէն շատերը, որոնք այդ դիւահար ճամբորդին հանդիպեր էին, կըզգային թէ տարօրինակ դէպքի մը լրարբերն էր ան: Ամէն մարդ անոր աղուովէն շուկան նեմուներ էր, որճարանները լեցուներ էին անհնար սպասող հետաքրքիր բազմութեամբ մը:

Սուր հանգստի միջոցին արագութեամբ կառավարական շէնքին բակը մտաւ, ինքզինքը ձիէն վար նետեց, ու առանց ուշադրութիւն դարձնելու իր ձիուն, որ արիւնախառն փրփուրի տակ ծածկուեր ու յողովներէն լեզուն դուրս կախեր էր, շէնքէն ներս վազեց խելայեղօրէն պոռալով՝

— Զարկին, սպաննեցին, սատկեցուցին...

— Ո՞վ զարկին, ո՞վ սպաննեցին, ո՞վ սատկեցուցին, հարցուց ոտտիկանը, որ երիտասարդ լազին ձայնէն դուրս փութացեր էր:

— Յինաօ Օղլուն, իր ամբողջ խումբով, մինչեւ հիմա լէշերնին պաղեցաւ, ուռեցաւ, հոտեցաւ...:

(Շարունակելի)

ԹԻԻՐՔԻՈՅ ՉՈՐՍ ԿՈՂՍԸ

Հնչակեան և Գրոշակեան պատգամաւորներու կողմէն՝ ազատական թիւրքերու Գոնկրէին մասին պատրաստուած համառոտ տեղեկագրութեան մէջ մասնաւոր ուշադրութիւն դրաւող պարագայ մը կայ՝ Մակեդոնիոյ վերաբերութեամբ:

Երիտասարդ թիւրքերը կը յաւակնին պնդել, թէ ուրոյն մակեդոնական հարց մը գոյութիւն չունի:

Տաճիկներուն մշտնջենական ինքնախաբեութիւնը շեշտող այս թեթեւ յայտարարութիւնը երբեք նշանակութիւն մը չպիտի ունենար մեր առջեւ, եթէ զլիսաւոր ու թերեւ միակ հիմը չկազմեր ան ամբողջ երիտասարդ թիւրքերու ծրագրին:

«Մակեդոնական հարց չի կայ...»

Զիկար նաև Պոսնա-Հէրսէլի հարց, չիկար Գարատաղի հարց, չիկար Սերպական ու Պուլկարական հարց, բայց ասոնք ամէնքը՝ մէկիկ մէկիկ, բաժնուեցան տաճակական կայսրութենէն, ու այսօր՝ իրենց ազատ ու անկախ գոյութեամբը կ'ապացուցանեն, թէ օ և է հակառակութիւն կամ օ և է տխմար ուրացում չի կրնար ազդի մը իրաւունքները շնչել և իրողութիւնները ոչնչացնել:

Այդ շատ երիտասարդ թիւրքերը գուցէ քի յիշեն Սեր-

պիոյ և Պուլկարիոյ պատմութիւնը. բայց կրէտէին ինչ պիտի ըսեն:

Դեռ երէկ, երբ կրեւոսցի յեղափոխականները՝ իրենց արիւնոտ ճամբուն վրայ բազմութիւ ղոհեր ձգած՝ կը բողոքէին տաճիկ բարբարոսութեանց դէմ, երբ իրենց ղէնքերուն ուժովը տեղական բարենորոգումներ կը պահանջէին անոնք, նոյն տաճիկներն էին զարձեայ որ կը պնդէին, թէ կրէտական հարց գոյութիւն չունի:

1878ի Հալէբայի դաշնադրութիւնն ալ ուրացան երբեք և ուզեցին որ իրենց բնահանդէր, իրենց վայրագ կամայականութիւնը տէրէ զարձեայ իրբէ միակ ու գերագանց օրէնք:

Ու քանի մը տարի առաջ, երբ Թեոսալիոյ դաշտերուն մէջ թիւրք բանակը յաղթական կը յառաջանար, երբ իրենց խալիֆան կը յաջողէր հելլեններու արեան մէջ լուսլ հայ նախճիրներու քսամնելի յիշատակը, նոյն տաճիկները կ'երազէին իրենց անարդ լուծին տակ առնել վերտին Յոյնն ու Պուլկարը, Սերպն ու Գարատաղցին, և թողնէին կը պատուէին, թէ մակեդոնացի, կրեւոսցի գոյութիւն չունի, ամէնքը օթթօմպն են և ստրուկ, հպատակ՝ օսմանեան գահին:

Երէկ կրեւոսցիներու ազատութեան ակնաւորեցան սակայն, ու վաղը, թող բնաչ չի տարակուսին, կենդանի վկանները պիտի ըլլան հայկական ու մակեդոնական պատերու յաղթանակին:

Բայց ինչպէս կ'երևի, թիւրքերը չեն ուզէր երբեք պատմութիւնն ու իրողութիւնները ճանչնալ: Կը սպասէին որ գոնէ երիտասարդ, ազատական թիւրքերը, որոնք իրենց պետութեան վերականգնումը ծրագրելու ելած են՝ իրական կացութիւն մը ըմբռնելու շափ միացունենային, և օսմանեան իշխանութեան ներքեւ շարժը, ուղղ ազդերուն իրաւունքները յարգել խրատուած ըլլային:

Վերջին Համաժողովը նոր ու շախշախիչ ապացոյց մըն ալ աւելցուց, թէ ազատական օսմանցիները երկրին ճշմարիտ կացութեան հիմնական գիտակցութեամբը պատրաստուած ծրագրէ մը չեն առաջնորդուիր:

Իրաւ է, թէ շակէ շիտակ չի կրցան ուրանալ հայկական հարցի անշատ գոյութիւնը, չի յանդգնեցան բացէ ի բաց «խռովարար» անուանել հայ յեղափոխականները, բայց իրենց երկդիմի, անորոշ ու տարտամ բացաբութիւններով կը հաստատէին, թէ իրենց բուն և միակ նպատակն է տաճիկ կայսրութեան այսօրուան բոլոր հպատակ ցեղերուն ուրոյն գոյութիւնը անհետացնել, և այդ դժգոհ տարբերուն արդար ու անժխտելի պահանջումները կեղծ «ընդհանուր բարենորոգում»ներու գործադրութեամբ մը միանգամ ընդ միշտ խեղդել, լիմցնել:

Ամէն անգամ որ ուղիքան Համիտին յիշեցուցած են հայկական հարցի լուծման անհրաժեշտութիւնը, պատասխանած է միշտ, թէ իր փափաքն է երկրին ընդհանուր

մասերուն համար բարենորոգումներ գործադրել, ամէն ազգի համար միանգամայն, առանց կրօնքի եւ լեզուի խտրութեան:

Այս յայտարարութեամբ, սուլթան Համիտ՝ բնականաբար, ըսել շուրջեր երբէք, թէ ինք իր ձեռքով պիտի վերադարձնէ իր իշխանութեան հպատակ քրիստոնեայ ցեղերուն յափշտակուած, բռնաբարուած իրաւունքները, իւրաքանչիւրին՝ իր տեղական ու ցեղային պէտքերուն համաձայն:

Իսլամներու «անպատասխանատու» վեհապետին ծրարագիրն է նոյնպէս հայկական, մակեդոնական եւ այլ ցեղային գոյութեանց հարցերը ընդհանուր օսմանցիութեան մէջ հալեցնել եւ իր աստուածպետական կառավարութեան տակ անուսկանաբար ճնշել, կաշկանդել ըստ ներք՝ միշտ բարձր, միշտ հզօր, միշտ տիրապետող ու բռնապետող պահելով իսլամ տարրի զիրքն ու ազգացութիւնը:



Համիլամական շարժումը նոր փուլի մը մէջ մտած ըլլալ կը թուի: Այդ շարժումին պետերը, կ'ըսէ գերմանական թերթ մը, խմբագրած են ծանուցագիր մը Ղուրանէն քաղուած հատուածներով՝ Եգիպտոսի Խտիվին դէմ ուղղուած:

Այդ ամբաստանագրին մէջ Խտիվը կը ներկայացնեն իբրեւ իշխանութեան ամենէն վտանգաւոր թշնամին: Այս սօքրիւմանը՝ որ տեսակ մը յանդիմանագիր ալ է, զրկուած է աշխարհի ամէն կողմերը գտնուող համիլամական միութեան քօմիթէներուն: Երբ այս հեռուոր մասնաճիւղերուն հաւանութիւնն առնուի, այդ ծանուցագիրը պիտի դրօսի սուլթանին եւ երոպական կառավարութեանց առջեւ: Ատոր նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ Խտիվը պաշտօնանկ ընելու անհրաժեշտութիւնը ցուցնել եւ Ղուրանին հաւատարիմ հետեւող մը զնել անոր տեղ:

Այս ծանուցագիրը խմբագրող իլէմաններուն կարծիքով, Խտիվին ընտանիքը վտանգի տակ դրած է իսլամութեան միութիւնը՝ երկար ատենէ ի վեր, Ապօսթոլաւ Բաշա անկախ թագաւորութիւն մը հիմնել կ'երազէ եւ կը գիտէ այնպիսի միջոցներու, որոնք՝ եթէ յաջողին՝ անհաշտելի բաժանում մը առաջ պիտի բերեն մահմետական աշխարհին մէջ եւ ընդհանուր խաղաղութեան համար վտանգ մը պիտի ստեղծեն:

Համիլամականներու կարծիքով, Ապպաս Բաշան յիզափոխութեան կեդրոն մը պարձուցած է Եգիպտոսը եւ ամբերով սօկի կը վաճնէ Երլտըլի մէջ պահած իր լըր տեսներուն համար, եւ կ'աշխատի պալատուն պաշտօնեաները իր կողմը սիրաշահել:

Եթէ Խտիվին փառասիրութիւնը իրագործուի, Երոպան՝ այդ կողմէն ո'չ միայն օգուտ չպիտի կրնայ քաղել, այլ՝ մտահոգ ըլլալու լուրջ պատճառներ պիտի

ունենայ:

Մահմետական աշխարհի մէջ հերձուած կամ բաժանում յառաջ բերելու ո՛ր եւ է ջանք, կ'աւելցնէ գերմանական թերթը, կրնայ իրենց այժմեան հանդարտ քունէն արթնցնել միալիմանները, որոնք անվտանգ ու թշնամական դիրք մը պիտի բռնեն հանդէպ Երոպայի, կասկածելով թէ այս վերջինն է Ապպաս Բաշայի ջանքերը քաջալերողը:

Խտիվին դէմ այս յուզումը յստակ կերպով կը ցուցնէ համիլամական շարժումին նպատակներն ու կարելութիւնը: Թէև սուլթանը չի յանդգնիր հակառակիլ այդ շարժումին, բայց Երոպա պէտք է ուշադիր հետևանոր: Սուլթանը այդ շարժումներուն կարեւորութիւնը զգալով, իբրև քաղաքական եւ կրօնական պետ մահմետական աշխարհի մեծամասնութեան, պիտի ուզէ անշուշտ զդաջնել այդ տեսակ բաժանումներու վտանգը եւ որ եւ է առիթ ձեռքէ չպիտի հանէ իր իսկ դիրքը ուժով ցնդու եւ իր հեղինակութիւնը ճանչցնելու համար բոլոր մահմետականներուն՝ իր պետութեան սահմաններէն ալ անդին անցնելով: Այդ նպատակով է որ Պոլսէն միլիոններ ճամբայ կը հանուին դէպ ի Չինաստան եւ Ափրիկէ: Եւ նոյնիսկ Հիւսիսային Երկրներէն շինութիւնը՝ որուն ամբողջ միալիման աշխարհը հրաւիրուած էր մասնակցիլ՝ քաղաքական բարեփոխանութիւնը մըն էր միայն:

Սուլթանը կ'ուզէ որ ինք ըլլայ բոլոր համիլամական շարժումներուն կեդրոնը, եւ նախանձուտ կերպով մը կը գիտէ այդ կեդրոնը ուրիշ տեղ փոխադրելու ամէն ջանք:

Համիլամական շարժումը իրականութիւն մըն է այսօր, աւելի կամ նուազ գաղտնի: Իր ուղղութիւնը եւ քօմիթէները, իր վարչական եւ գործադիր ժողովներն ունի, եւ իր մասնաճիւղերը կը տարածուին Կովկասէն մինչեւ Հնդկաստան, Արաբիա, Սուտան եւ ամբողջ Փոքր Ասիա:



Թող Երիտասարդ թերթերը աչքերնին գոցեն, ականջնին խցեն եւ իրականութիւնները մոռցած՝ յայտաբարեն, թէ հայկական ու մակեդոնական հարց գոյութիւն չունի: Այս դժգոհ ցեղերու յեղափոխականները խորունկ գիտակցութիւնն ունին իրենց գատին արդարութեանը, եւ իրենց արիւնին ուժովը անկասկած պիտի հասնին իրենց նպատակին:

Մակեդոնիան այսօր աւելի քան երբէք բռնկած է: Ամբողջ երոպական մամուլը անով կը զբաղէ եւ Պոլիս, գիւանազիտական ուշադրութիւնը դաբձած է զլիաւորաբար Մակեդոնիոյ անիշխանական վիճակին վրայ:

Ռուսական զեռպանը կը օտարի Պալատը ու Գուբա, օրպէսզի բարեկարգութիւնը վերահաստատուի: Եւ սուլթանը՝ իբրև պատասխան իրեն եղած դիմումներուն՝ կը գրգռէ ալպանացի մահմետականները, որոնց անդթու-

Թիւնն ու բարբարոսութիւնը ամէն շափ լրացուցած է:

Երկրէն մեզ հասած լուրերը շատ տագնապիչ են: Հետզհետէ նոր կոտորածի մը վաւանգը սպառնական կը դառնայ:

Ամբողջ Տաճկաստանի մէջ անհանդարտ վիճակ մը կը տիրէ: Լաւաանդեակ շրջանակներու մէջ մեծ մտահոգութիւն կայ քրիստոնեաներու կեանքին ու ապահովութեանը մասին:

«Թայմզ»ի թղթակցին կարծիքով մօտաւոր Արեւելքի կացութիւնը ամէն ժամանակէ աւելի վատթար ու տագնապալից է:

Եթէ, կ'ըսէ, սուլթանը՝ բարի կամեցողութեամբ, պէտք եղած պատրաստութիւններով և տրամադրութիւնով ապստամբութիւնները հանդարտեցնելու գէ, խնդիրը տարբեր կերպարանք կը ստանայ: Իսկ եթէ թրքական մեթոտները՝ որոնք դժբաղդաբար շատ ծանօթ են մեզի՝ գործադրուին նորէն կարգապահութիւն վերահաստատելու պատրուակին տակ, այն ատեն մէկ ելք միայն կը մնայ, այն է՝ եւրոպական միջամտութիւն: Այդ տեսակ միջամտութեան մը յառաջ բերելիք բոլոր կնճռոտութիւնները հեռացնելու համար, Ռուսիա եւ Աւստրիա ամէն կարելի միջոցներով ազդեցութիւն կը բանեցնեն տաճիկ կառավարութեան վրայ՝ մասնաւորապէս Մակեդոնիոյ վիճակը հանդարտեցնելու նպատակով:

Հաւանականութեանց կարգէն է նաեւ ընդհանուր միալիման մտնանդութեան մը շղթայագերծումը, եւ այն ատեն ո՛չ թէ Ռուսիա և Աւստրիա միայն, այլ ամբողջ Եւրոպան վտանգուած պիտի զգայ իր քաղաքական եւ տնտեսական շահերը:

Եւրոպա՝ կ'ըսէ «Թայմզ», թեւերը ծալլեց ու անտարբեր ակնատեսօ եղաւ հայկական ջարդերուն: Կացութիւնը փոխուած է հիմա, և Եւրոպա ա՛յլ եւս չի կրնար հանդուրժել համայնական ջարդերու, որոնց ամենավտանգաւոր հետեւանքներուն վրայ պէտք է այս անգամ խորհած ըլլայ սուլթանը:



Ալպանական խնդիրը շատ սուր ու վտանգաւոր հանգամանք մը առած է ներկայ տնտեսական տագնապին պատճառով, որ աննախընթաց օստակութեամբ մը ամէն կողմ տիրած է: Ժողովրդին անհնարին եղած է գործ գտնել: Ճարտարարուեստ չի կայ երկրին մէջ: Երկրագործութիւնն ու արջառաբուծութիւնը բացարձակապէս անտեսուած ու ինկած են, որովհետեւ կառավարութիւնը կը հակառակի ամէն տեսակ ձեռնարկի: Մեծ հողատէրերու գետինները՝ իրենց 30 տարի առաջ արտադրածին մէկ տասներորդն իսկ չեն տար: Դժգոհութիւնը ընդհանուր է թիւրք կառավարութեան դէմ: մեծ ու պզտիկ ամենքն ալ կատաղած են: Ազգայնական խումբը, որ գեո քիչ առաջ մէկ քանի լուսաւորեալ դա-

տակարգերէ կը բաղկանար միայն, օրէ օր կը բազմապատկէ իր անգամներուն թիւը: Այս շարժումը առաջ տանելու ո՛չ մէկ առիթ կը կորսնցնեն պետերը, և թերթեր կը ցրուեն՝ ժողովուրդը ընդգրկմութեան գրգռելու համար:



Ինչպէս պարզ կը տեսնուի, Արեւելքի հորիզոնը նորէն սպառնալից է: Երկրի ամէն կողմերը ինկած զոհերու ուրուականները նորէն սկսած են քունը խոզով աստուածաստուեր ուղլթանին, որ կ'ուզէ շարունակել իր ջնջելու, կոտորելու յամառ մէթոտը, միշտ միևնոյն երազով, թէ պիտի կրնայ սուրով և բիրով ոչնչացնել ամէն տրտունջ և հիմնել վերջապէս իր ծրագրած համայն իսլամական պետութիւնը Հնդկաստանէն մինչեւ Մարոք, Փանգէօի ափերէն մինչեւ Ատլանտիան տարածուած: Այսօր 70,000 զօրք կը դնէ շարժուն վիճակի մէջ, եւրոպական թիւրքիոյ մէջ, միանգամ ընդ միշտ ջնջելու համար «քաղաքական այն ահաբեկիչ զօրութիւնը» — մակեդոնական յեղափոխութիւնը:

Բայց հազարաւոր կոռուղներու արիւնովը նուիրագործուած այդ շարժումը կարելի չպիտի ըլլայ անշուշտ կասեցնել: Եւ հակառակ տաճիկ կառավարութեան կողմէն ձեռք առնուած ամենախիստ միջոցներուն, Պուլկարիայէն նտրանոր ապստամբական խմբակներ կը լեցուին Մակեդոնիա:

Այս ամենուն մէջ աւելի քան զզուելի է յոյներուն ընթացքը՝ որով բացէ ի բաց հաւաքական ցոյցեր կ'ընեն ընդդէմ մակեդոնական պուլկարներուն եւ չեն խպնիր իրենց համակրութիւնը յայտնել թիւրքերուն, որ զեռերէկ կնւզէին իրենց հարէմները զարդարել զեղեցիկ հելլէնուհիներով, Վալոյի ծոցին դիւթիչ ափունքին մօտիկ:

ՀԱՍՑԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժնեգրի զրկել հետեւեալ հասցէին:

REDACTION DU "NOR-GUIANK,"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N.W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին: Բաժնեգրին է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեա 1 սոլար: